Հավելված N 1
ՀՀ կառավարության 2017 թ.
ապրիլի 6-ի նիստի N 14
արձանագրային որոշման

ԳԼՈՒԽ Ի. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. Հայաստանը գտնվում է սեյսմաակտիվ գոտում, որտեղ պարբերաբար տեղի են ունենում ուժեղ երկրաշարժեր: 1988 թվականին Սպիտակի երկրաշարժը վերջին հարյուրամյակի ամենաաղետալի սեյսմիկ իրադարձությունն էր հանրապետության տարածքում: Դրա հետևանքով զոհվեց 25000 մարդ, 517000 մարդ դարձան անօթևան, տնտեսությանը պատճառվեց 14,2 մլրդ ԱՄՆ դոլարի վնաս:

2. Հանրապետության տարածքի մեկ երրորդը գտնվում է սողանքավտանգ գոտում: Սողանքավտանգ տարածքները հիմնականում լեռների ստորոտներում և լեռնային տարածքներում են: Մոտ 470000 մարդ կամ երկրի ողջ ազգաբնակչության 15%-ը ենթակա է այս վտանգին, իսկ պատճառած միջին տարեկան վնասը կազմում է մոտ 10 մլն ԱՄՆ դոլար:

3. Կլիմայի փոփոխության ազդեցությունները զգացվում են ողջ աշխարհում և Հայաստանը բացառություն չէ: Այն բնորոշվում է խոցելի էկոհամակարգերով, կլիմայի չորայնությամբ, ակտիվ արտածին ու անապատացման գործընթացներով և հաճախակի նկատվող տարերային աղետներով, որոնք երկիրն առավել զգայուն են դարձնում կլիմայի փոփոխության ազդեցությունների նկատմամբ: Վերջին մի քանի տասնամյակների ընթացքում եղանակային և կլիմայական վտանգավոր երևույթների ուժգնությունը և հաճախականությունն աճել է: Տարերային աղետների շարքում Հայաստանը զգալի ազդեցություն է կրում երաշտներից, վաղ գարնանային ցրտահարություններից, կարկտահարություններից, սելավներից, ջրհեղեղներից, ուժեղ քամիներից և անտառային հրդեհներից:

4. 1935-2014 թվականների օդերևութաբանական դիտարկումների տվյալների ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Հայաստանում 1961-1990 թվականների միջինի նկատմամբ դիտվել է տարեկան ջերմաստիճանի աճ 1.03^{0}C-ով և տեղումների նվազում շուրջ 8%-ով: Ջերմաստիճանի և տեղումների փոփոխությունները Հայաստանի Հանրապետության տարածքի տարբեր շրջաններում և տարվա տարբեր եղանակներին ունեն տարբեր միտումներ:

5. Համաձայն կլիմայի փոփոխության մասին երրորդ ազգային հաղորդագրության տվյալների՝ 2030, 2070, 2100 թվականների կտրվածքով կանխատեսվում է ջերմաստիճանի նշանակալի և անընդմեջ աճ, հատկապես գարնան և ամռան ամիսներին: Գումարային գետային հոսքը մինչև 2030 թվականը կնվազի 11.6%-ով, մինչև 2070 թվականը՝ 24.9%-ով, մինչև 2100 թվականը՝ 39.8%-ով (1961-1990 թվականների նորմերի համեմատ): Ջրային ռեսուրսների նվազեցումը բացասաբար կանդրադառնա գյուղատնտեսական արտադրության վրա՝

առաջացնելով պարենային ապահովվածության անհրաժեշտ մակարդակի ապահովման հիմնախնդիրներ:

6. Տեխնածին աղետները նույնպես ռիսկի աղբյուր են հանդիսանում: Հայաստանում կան 20-ից ավելի քիմիական գործարաններ, որոնք օգտագործում են ամոնիակ, քլոր, քլորաթթու, ազոտաթթու և այլ վտանգավոր քիմիական նյութեր: Հանրապետության տարածքում 1500-ից ավելի կազմակերպություններ հատկանշվում են բարձր պայթյունավտանգությամբ և հրդեհավտանգությամբ: Հանրապետությունում շահագործվող օգտակար հանածոների հանքավայրերով պայմանավորված առկա են գործող և կոնսերվացված պոչամբարներ: Հայկական ատոմային էլեկտրակայանը գտնվում է սեյսմաակտիվ գոտում:

7. Հայաստանի ազգաբնակչությունը, տնտեսությունը և շրջակա միջավայրը մեծապես խոցելի են բնական երևույթների հետևանքով առաջացող աղետների նկատմամբ: Բարձր է աղքատության մակարդակը, աղքատ բնակչությունը կենտրոնացած է գյուղական համայնքներում և մարզերում գտնվող քաղաքներում: Ուրբանիզացիայի բարձր մակարդակի (70%-ից ավելի) պատճառով աղետների վտանգները, հատկապես սեյսմիկ վտանգը, սպառնում են քաղաքներին: Աղետներից խոցելի է նաև տնտեսությունը: 1990-2005 թվականների ընթացքում Հայաստանի անտառածածկ մակերեսի 20%-ը կամ մոտավորապես 63000 հա անտառ ենթարկվել է համատարած և մասնակի չկարգավորվող հատումների, ինչի արդյունքում զգալիորեն մեծացել է սելավների և սողանքների առաջացման հավանականությունը: Անհետաձգելի անհրաժեշտություն է աղետների նկատմամբ դիմակայունության բարձրացումը, որը կարող է իրականացվել աղետների ռիսկի կառավարման բոլոր մակարդակներով զարգացման ծրագրերի մեջ ինտեգրելու և կարողությունների զարգացման միջոցով:

8. Աղետների ռիսկի նվազեցման ոլորտի իրավական դաշտը կանոնակարգված է, սակայն այն ունի շարունակական կատարելագործման կարիք՝ ելնելով արդի մարտահրավերներից: Ընդունվել են «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին», «Հրդեհային անվտանգության մասին», «Հիդրոօդերևութաբանական գործունեության մասին», «Սեյսմիկ պաշտպանության մասին», «Քաղաքացիական պաշտպանության մասին», «Փրկարար ուժերի և փրկարարի կարգավիճակի մասին», «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին», «Փրկարար ծառայության մասին», «Քաղաքացիական պաշտպանության ստորաբաժանումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքները, ինչպես նաև բնագավառին առնչվող Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ և այլ իրավական ակտեր, սահմանված են արտակարգ իրավիճակներում հանրապետական գործադիր մարմինների, գերատեսչությունների, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների իրավասությունները:

9. Աղետների ռիսկի կառավարման միասնական համակարգի ձևավորումը և հետագա զարգացումը հնարավորություն կտա ապահովել հորիզոնական և ուղղահայաց

համագործակցություն աղետների ռիսկի կառավարման ոլորտում ներգրավված պետական և ոչ պետական կառույցների միջև՝ ընդգրկելով նաև քաղաքացիական հասարակությանը:

10. Աղետների ռիսկի կառավարման ոլորտում միջազգային գործունեության ուղղությամբ Հայաստանի Հանրապետությունը՝

1) միացել է հնարավոր արտակարգ իրավիճակներ առաջացնող երևույթների, արտակարգ իրավիճակների կառավարման, հետևանքների նվազեցման և վերացման վերաբերյալ Միավորված ազգերի կազմակերպության (ՄԱԿ) և Եվրոպայի խորհրդի նաև Եվրամիության շրջանակներում կնքված մի շարք կոնվենցիաների և համաձայնագրերի.

2) արտակարգ իրավիճակներին հակազդման և փոխօգնության բնագավառում համագործակցում է ՄԱԿ-ի մարդասիրական գործերի համակարգման գրասենյակի, սահմանակից ու տարածաշրջանի պետությունների հետ.

3) հետևողականորեն շարունակում է այլ պետությունների հետ արտակարգ իրավիճակների բնագավառում համագործակցության համաձայնագրերի կնքման և համատեղ գործողությունների իրականացման գործունեությունը.

4) որպես ՄԱԿ-ի անդամ երկիր, 2015 թվականին միացել է աղետների ռիսկի նվազեցման Սենդայի 2015-2030 թվականների գործողությունների ծրագրին, որը սահմանում է աղետների ռիսկի նվազեցման բնագավառում պետությունների կողմից անհրաժեշտ ոլորտային և միջոլորտային նպատակաուղղված գործողություններ՝ տեղական, ազգային, տարածաշրջանային և գլոբալ մակարդակներում.

5) 2016 թվականին միացել է Կլիմայի փոփոխության ՄԱԿ-ի շրջանակային (Փարիզի) համաձայնագրին, որով նախատեսվում է բարձրացնել կլիմայի փոփոխության վնասակար ազդեցությանը դիմակայելու կարողությունները, նվազեցնել ջերմոցային գազերի արտանետումները և սահմանափակել ջերմաստիճանի բարձրացումը.

6) 2015 թվականին միացել է Անվտանգ դպրոցների միջազգային նախաձեռնությանը, որն ուղղված է դպրոցների անվտանգության բարձրացմանը:

ԳԼՈՒԽ II. ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՄԱՆ ՈՒ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ

11. Աղետների ռիսկի կառավարման ազգային ռազմավարության (այսուհետ՝ ռազմավարություն) մշակման ու ձևավորման հիմնական նախադրյալներից է Հայաստանի՝ աղետների նկատմամբ խոցելի լինելու հանգամանքը: Հաշվի առնելով տարեցտարի տարերային, տեխնածին և կլիմայի փոփոխության հետ կապված աղետների քանակի և ինտենսիվության աճը, ինչպես նաև դրանց կողմից տնտեսության տարբեր ճյուղերին հասցված զգալի կորուստներն՝

անհրաժեշտություն է առաջացել Հայաստանի Հանրապետության աղետների ռիսկերի նվազեցման ազգային ռազմավարության մեջ նոր լուծումներ և մոտեցումներ գտնել աղետների կառավարման, կանխարգելման, հետևանքների մեղմացման ու վերացման և վաղ ազդարարման համար:

12. Աղետների ռիսկի գնահատումն ու նվազեցումը քաղաքականության հաջող և լիարժեք իրականացման անհրաժեշտ նախապայման է: Աղետների ռիսկի գնահատման հիմնական նպատակն է ապահովել բնակչության անվտանգությունը՝ հավասարապես հաշվի առնելով կանանց, տղամարդկանց, երեխաների, տարեցների, հաշմանդամություն ունեցող անձանց, հատուկ կարիքներով և սոցիալապես անապահով խմբերի առանձնահատկությունները և պատրաստվածության աստիճանը:

13. Ռազմավարությունը համահունչ է Հայաստանի Հանրապետության Նախագահի 2007 թվականի փետրվարի 7-ի ՆՀ-37-Ն հրամանագրով հաստատված Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարությանը և Աղետների ռիսկի նվազեցման Սենդայի 2015-2030 թվականների գործողությունների ծրագրի գերակա ուղղություններին, դրանք են.

1) աղետների ռիսկի գիտակցում.

2) աղետների ռիսկի պետական կառավարման ուժեղացում՝ աղետների ռիսկի հաղթահարման համար.

3) ներդրումներ աղետների ռիսկի նվազեցման ոլորտում՝ դիմակայունության հզորացման համար.

4) աղետների պատրաստվածության ամրապնդում արդյունավետ արձագանքման համար և «Անել ավելին, քան արվում է» սկզբունքի ներդրում՝ ավելի արդյունավետ վերականգնում և վերակառուցում ապահովելու համար:

14. Աղետների ռիսկի նվազեցման Սենդայի 2015-2030 թվականների գործողությունների ծրագրի իրագործման առաջընթացը գնահատելու համար ընտրվել են յոթ թիրախներ, դրանք են.

1) մինչև 2030 թվականը նվազեցնել համընդհանուր մահացությունն աղետներից.

2) մինչև 2030 թվականը նվազեցնել տուժած մարդկանց թիվը.

3) մինչև 2030 թվականը նվազեցնել աղետների պատճառած տնտեսական վնասը.

4) մինչև 2030 թվականը կրճատել կարևոր նշանակության ենթակառուցվածքներին աղետների պատճառած վնասը, ինչպես նաև հիմնական ծառայությունների մատուցման, այդ թվում՝ առողջապահական և կրթական հաստատությունների աշխատանքի խաթարումը՝ դիմակայունության բարձրացման միջոցով.

5) մինչև 2020 թվականն ավելացնել աղետների ռիսկի նվազեցման ազգային ռազմավարություններ ունեցող երկրների թիվը.

6) մինչև 2030 թվականը հզորացնել միջազգային համագործակցությունը.

7) մինչև 2030 թվականն ավելացնել տարատեսակ վտանգների համար նախատեսված վաղ ազդարարման համակարգերի թիվը և մատչելի դարձնել դրանց հասանելիությունը, ինչպես նաև աղետների ռիսկի մասին տեղեկատվության և գնահատումների հասանելիությունը բնակչության համար:

15. Հիմնական նախադրյալներից է հանդիսանում նաև ռազմավարության կապը և ներդաշնակությունը երկրի կայուն զարգացման ու ազգային անվտանգության ռազմավարությունների հետ: Աղետների ռիսկի կառավարումը կարևորվում է նաև տարբեր բնագավառների զարգացման ռազմավարություններում:

16. Աղետների ռիսկի կառավարման և աղետներին դիմակայունության միջոցառումներն արտացոլված են նաև ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի 2015 թվականի սեպտեմբերի 25-ին ընդունված «Փոխակերպելով աշխարհը. մինչև 2030 թվականը կայուն զարգացման օրակարգը» բանաձևում: Աղետների ռիսկի կառավարմանն առնչվող կայուն զարգացման նպատակներից են.

1) միահամուռ ուժերով աղքատության վերացում՝ դրա բոլոր դրսևորումներով.

Մինչև 2030 թվականը բարձրացնել բնակչության անապահով և խոցելի խավի կենսակայունությունը, նվազեցնել նրանց խոցելիությունը կլիմայի փոփոխությամբ պայմանավորված երևույթների, տնտեսական, սոցիալական և բնապահպանական ցնցումների ու աղետների նկատմամբ:

2) սովի վերացում, պարենային անվտանգության ապահովում ու սնուցման բարելավում և աջակցություն գյուղատնտեսության կայուն զարգացմանը.

Մինչև 2030 թվականն ապահովել սննդամթերքի արտադրության կայուն համակարգի ստեղծում և գյուղատնտեսական գործունեության այնպիսի մեթոդների ներդնում, որոնք թույլ են տալիս բարձրացնել արտադրության արդյունավետությունը և ավելացնել արտադրական ծավալները, ինչպես նաև նպաստում են էկոհամակարգերի պահպանմանը, գյուղատնտեսական նշանակության հողերի որակի պահպանմանը և բարելավմանը, բարձրացնում են հարմարվողականությունը կլիմայական փոփոխությունների, երաշտների, ջրհեղեղների ու այլ աղետների նկատմամբ:

3) առողջ ապրելակերպի ապահովում և բարեկեցության խթանում.

Հզորացնել վաղ ազդարարման, աղետների ռիսկի նվազեցման և առողջապահական ազգային ու գլոբալ ռիսկերի կառավարման բնագավառի ներուժը:

4) համընդհանուր հավասարապես հասանելի, ներառական ու որակյալ կրթության ապահովում կրթական յուրաքանչյուր մակարդակում և կրթության հնարավորության խրախուսում բոլոր տարիքային խմբերի համար.

Մինչև 2030 թվականն ապահովել բոլոր սովորողների կողմից անհրաժեշտ գիտելիքների և հմտությունների ձեռք բերումը հասարակության կայուն զարգացմանը նպաստելու համար, այդ թվում՝ կայուն զարգացման և առողջ ապրելակերպի, մարդու իրավունքների և համաշխարհային մշակույթի քարոզչության հարցերով ուսուցանելու միջոցով: Հիմնել և արդիականացնել

ուսումնական հաստատություններ՝ հաշվի առնելով սովորողների շահերը, կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների ներառման համար համապատասխան պայմանների ստեղծման անհրաժեշտությունը:

5) համայնքների դիմակայունության, ապահովության և կենսակայունության ապահովում.

Մինչև 2030 թվականը կրճատել աղետների հետևանքով զոհված ու տուժած մարդկանց թիվը, հատուկ ուշադրություն դարձնել բնակչության անապահով և խոցելի խմբերի պաշտպանությանը, ավելացնել այն համայնքների թիվը, որոնք կմշակեն և կիրագործեն կլիմայի փոփոխությանը, հարմարվողականությանը ու դրա հետևանքների մեղմմանը, բնական ռեսուրսների օգտագործման արդյունավետության բարձրացմանը և աղետներին դիմակայելուն ուղղված ռազմավարություններ և ծրագրեր և, Աղետների ռիսկի նվազեցման Սենդայի 2015-2030 թվականների գործողությունների ծրագրին համապատասխան մշակել ու ներդնել աղետների ռիսկի կառավարման մեխանիզմներ:

6) կլիմայի փոփոխության և դրա հետևանքների դեմ պայքարի հրատապ միջոցառումների ընդունում.

Բարձրացնել վտանգավոր կլիմայական երևույթների և տարերային աղետների նկատմամբ դիմակայունությունը և հարմարվողականությունը: Կլիմայական փոփոխություններին արձագանքման միջոցները ներդնել քաղաքականության, ռազմավարության և պլանավորման մեջ: Ընդլայնել մարդկանց և հաստատությունների հնարավորությունները կլիմայական փոփոխությունների ու դրանց հետևանքների մեղմման, հարմարվողականության ուղղությամբ, բարձրացնել այդ բնագավառում տեղեկատվության լուսաբանման և իրազեկման մակարդակը, աջակցել կլիմայի փոփոխության հետ կապված պլանավորման և կառավարման հնարավորությունների ամրապնդման մեխանիզմների ստեղծմանը.

7) էկոհամակարգերի պաշտպանություն և վերականգնում, աջակցություն դրանց ռացիոնալ օգտագործմանը, արդյունավետ անտառօգտագործում, պայքար անապատացման դեմ, հողերի դեգրադացման և կենսաբազմազանության կորստի կրճատում, ջրային ռեսուրսների առկայության ու դրանց ռացիոնալ օգտագործման ապահովում:

17. Ազգային անվտանգության ռազմավարության մեջ արտակարգ իրավիճակների ոլորտի վտանգներից առանձնացված են հետևյալները.

1) պետության տարածքում, սահմանակից շրջաններում տարածաշրջանային ավերիչ երկրաշարժերը և այլ բնական ու տեխնածին աղետները, ինչպես նաև համընդհանուր մահաբեր համաճարակների բռնկումները.

2) Հայաստանի հետագա ուրբանիզացումը՝ կապված սեյսմիկ գոտիներում բնակչության խիտ բնակեցման, գյուղական շրջաններում ժողովրդագրական իրավիճակի վատթարացման, սահմանամերձ գյուղերի ամայացման վտանգների հետ.

3) Հայաստանը շարունակում է լրացուցիչ ճանապարհների, ջրատարների, գազատարների, լուսավորության, կապի համակարգերի և այլ ենթակառուցվածքների զարգացման կարիք զգալ:

18. Վտանգների կանխումը, աղետների հետևանքների վերացումը դիտարկվում են որպես երկրի կայուն զարգացման նախադրյալ: Կարևորագույն խնդիրներ են դիտարկվում աղետների ռիսկի կառավարման համակարգի արդիականացումը և հետագա զարգացումը՝ շեշտը դնելով հետևյալ ուղղությունների վրա.

1) բնածին և տեխնածին աղետների կանխատեսման ու վաղ ազդարարման, դրանց արագ արձագանքման համակարգերի զարգացումը.

2) աղետների ռիսկի կառավարման բնագավառում ներդրումների իրականացումը.

3) բնակչության իրազեկվածության ու կրթվածության մակարդակի բարձրացումը, աղետներին դիմակայունության մշակույթի ձևավորումը.

4) ենթակառուցվածքների ու տարածքային համաչափ զարգացումը, աղետակայուն երկրի կառուցումը:

19. Բարձրագույն ուսումնական հաստատություններում և հանրակրթական դպրոցներում, ներդնելով համապատասխան կրթական ծրագրեր, իրականացվում է աղետների ռիսկի նվազեցմանն ուղղված ծրագրային ուսուցում: Աղետների ռիսկի նվազեցման ուսուցման թեմաները ընդգրկվել են հանրակրթության պետական չափորոշիչներում, որը հնարավորություն է տալիս աղետների ռիսկի նվազեցման կրթությունն իրականացնել նաև տարրական և միջին դպրոցներում, ինչպես նաև նախադպրոցական հաստատություններում: Կարևորվել է հանրակրթական ուսումնական հաստատությունների կառուցվածքային անվտանգության բարձրացման անհրաժեշտությունը: Կանոնակարգված է ղեկավարների և մասնագետների պարբերաբար վերապատրաստման գործընթացը: Գիտելիքի և փորձառության առկա կարողությունները և դրանց հետագա զագացման ապահովումը հանդիսանում են ռազմավարության իրականացման, զարգացման, ինչպես նաև անվտանգության և աղետներին դիմակայման մշակույթի ձևավորման հիմնաքարերից մեկը:

20. Ձևավորվել են աղետների, դրանց ռիսկի նվազեցմանն ուղղված բնակչության իրազեկման հիմքերը: Այն արտահայտվում է արտակարգ իրավիճակների կառավարման ոլորտում ներգրավված դերակատարների միջև տեղեկատվության փոխանակման կանոնակարգմամբ՝ անկախ կազմակերպաիրավական տեսակից, բոլոր լրատվական կառույց-ների աշխատակիցների վերապատրաստմամբ և ուսուցմամբ, այդ մարմինների և արտակարգ իրավիճակների բնագավառում լիազորված մարմնի միջև սերտ կապերի, բնակչության իրազեկմանն ուղղված մասնագիտացված կառույցների և տեղեկատվական միջոցների ստեղծմամբ, իրազեկման ինտեգրմամբ միջազգային գործընթացներին և զարգացումներին, միջազգային փորձի ներդրմամբ: Նման դաշտի զարգացումն անժխտելիորեն կնպաստի անվտանգության և աղետների դիմակայման մշակույթի ձևավորմանը՝ հանդիսանալով ռազմավարության իրականացման կարևորագույն բաղկացուցիչ:

21. Աղետների ռիսկի կառավարման ոլորտում ձևավորվել են զարգացած, ժամանակակից, կայուն հիմքեր պետական և ոչ պետական կառույցների միջև համագործակցության

մեխանիզմներ, հանրապետությունում գործող «Աղետների ռիսկի նվազեցման ազգային պլատֆորմ» հիմնադրամի շնորհիվ ձևավորվել է անհրաժեշտ միջավայր, ստեղծվել են աղետների ռիսկի նվազեցման մարզային թիմեր:

ԳԼՈՒԽ III. ՆԵՐԿԱ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

22. Որպես ՄԱԿ-ի անդամ երկիր, 2005 թվականին Հայաստանը միացել է Հյոգոյի 2005-2015 թթ. «Ազգերի և համայնքների՝ աղետներին դիմակայելու կարողությունների զարգացման գործողությունների ծրագրին» (այսուհետ՝ ՀԳԾ) և անցած տարիների ընթացքում Հայաստանի Հանրապետության կառավարությունը լուրջ քայլեր է ձեռնարկել ՀԳԾ-ի իրականացման և հատկապես աղետների ռիսկի նվազեցումը զարգացման քաղաքականության և ծրագրերի մեջ ինտեգրելու ուղղությամբ՝ ճանաչելով այն որպես երկրի զարգացման և անվտանգության գերակա ուղղություն:

23. ՀԳԾ-ի գերակայություններն են.

1) երաշխավորել, որ աղետների ռիսկի նվազեցումը պետական և տեղական նշանակության գերակայություն է և իրականացման առումով գտնվում է ամուր համակարգային հիմքերի վրա.

2) բացահայտել, գնահատել և վերահսկել աղետների ռիսկերը և զարգացնել վաղ ազդարարման համակարգը.

3) օգտագործել գիտելիքը, նորարարությունները և կրթությունը՝ բոլոր մակարդակներում անվտանգության և դիմակայման մշակույթ ձևավորելու համար.

4) նվազեցնել աղետների հիմքում ընկած ռիսկային գործոնները.

5) բոլոր մակարդակներով բարձրացնել աղետներին արդյունավետ արձագանքման պատրաստվածությունը:

24. Աղետների ռիսկի նվազեցման ուղղությամբ, ըստ ՀԳԾ-ի գերակայությունների, նշանակալի ձեռքբերումներ են գրանցվել, մասնավորապես.

1) Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 2-ի N 1694-Ն որոշմամբ հիմնադրվել է «Աղետների ռիսկի նվազեցման ազգային պլատֆորմ» հիմնադրամը, որի նպատակն է Հայաստանում աղետների ռիսկի նվազեցման բազմաճյուղ մեխանիզմի հիմնումը՝ բոլոր դերակատարների ներգրավմամբ.

2) Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի մարտի 7-ի N281-Ն որոշմամբ հավանության է արժանացել Հայաստանի Հանրապետության աղետների ռիսկերի նվազեցման ազգային ռազմավարությունը, որի նպատակն է ձևավորել աղետակայուն երկիր՝ ապահովելով անհատի, հասարակության անվտանգության աստիճանական բարձրացումն ու կայուն զարգացումը.

3) ստեղծվել են աղետների ռիսկի նվազեցման մարզային թիմեր, որոնք հանդիսանում էին համայնքային մակարդակում Աղետների ռիսկերի նվազեցման ազգային ռազմավարության և ՀԳԾ-ի իրականացման խորհրդատվական մարմիններ.

4) հանրապետության թվով 22 քաղաքներ անդամագրվել են ՄԱԿ-ի աղետների ռիսկի միջազգային ռազմավարության «Դարձնենք քաղաքներն անվտանգ. իմ քաղաքը պատրաստվում է» աղետների նվազեցման համաշխարհային արշավին՝ հանձն առնելով իրականացնել կարևորագույն քայլեր քաղաքներն անվտանգ դարձնելու համար.

5) տեղայնացվել և փորձարկվել է «Տեղական մակարդակում ռիսկի կառավարման» միասնական մեթոդաբանությունը, որն իրականացվում է համայնքի անմիջական մասնակցությամբ և հանդիսանում է համայնքային ռիսկերի բացահայտմանը և կառավարմանն ուղղված գործիք.

6) մշակվել է «Համայնքների ռիսկի վկայական», որը բնորոշվում է նրանով, որ համայնքին սպառնացող ռիսկերն ու զարգացման գործընթացները դիտարկվում են որպես սերտորեն փոխկապակցված ուղղություններ, որոնց իրականացումը կնպաստի համայնքի անվտանգ զարգացմանը և աղետների ռիսկի նվազեցմանը.

7) փորձարկվել է սեյսմիկ ռիսկի գնահատման «Քաղաքային սցենար» մեթոդաբանությունը, որը հնարավորություն է տալիս գնահատել ուրբանիզացման հետ կապված ռիսկերը՝ կիրառելով ստացված տվյալները քաղաքի հետագա զարգացման և տարածքային պլանավորման մեջ.

8) ձևավորվել են համայնքներում վաղ ազդարարման համակարգերի ներդրման հիմքերը.

9) «Հարմարվողականության և աղետների նվազեցման ուղղորդումը զարգացման մեջ» ծրագրի շրջանակներում Հայաստանը դարձել է գործընկեր երկիր՝ ներգրավելով համապատասխան մասնագետներ Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների, բնապահպանության, տնտեսական զարգացման և ներդրումների, ֆինանսների և տարածքային կառավարման և զարգացման նախարարություններից.

10) Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի ապրիլի 16-ի նիստի N 17 արձանագրային որոշմամբ հավանության է արժանացել Աղետների ռիսկի նվազեցման ուղղությամբ բնակչության ուսուցման հայեցակարգը, աղետների ռիսկի նվազեցման հարցերը ներառվել են հանրակրթության բնագավառի կրթական և առարկայական չափորոշիչներում, ինչպես նաև հանրակրթական դպրոցների, ԲՈՒՀ-երի, հետբուհական և լրացուցիչ կրթական ծրագրերում.

11) աղետների ռիսկի նվազեցման և արտակարգ իրավիճակներում կրթության կազմակերպման հարցերը ներառվել են Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայի բոլոր կրթական ծրագրերում (միջին մասնագիտական, բարձրագույն, լրացուցիչ կրթական ծրագրեր), արդյունքում ակադեմիայում վերապատրաստման ծրագրերով հանրապետության պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններից ու կազմակերպություններից

ուսուցում անցնող տարեկան շուրջ 1700 ունկնդիր, փրկարար ծառայության շուրջ 400 հրշեջ-փրկարար ծանոթանում են աղետների ռիսկի նվազեցման հարցերին, ակադեմիայի տարեկան 200 շրջանավարտներ մասնագիտորեն տիրապետում են աղետների ռիսկի նվազեցման հարցերին.

12) մի շարք նախարարություններ ու գերատեսչություններ վերանայել են ոլորտային ռազմավարություններն ու զարգացման ծրագրերը՝ ելնելով Աղետների ռիսկերի նվազեցման ազգային ռազմավարության խնդիրներից.

13) կլիմայի փոփոխության նկատմամբ հարմարվողականության խնդիրը հանրապետությունում դասվել է գերակա խնդիրների շարքին՝ հաշվի առնելով, որ Հայաստանը լեռնային, դեպի ծով ելք չունեցող երկիր է և բնորոշվում է խոցելի էկոհամակարգերով, կլիմայի չորայնությամբ, ակտիվ արտածին ու անապատացման գործընթացներով և հաճախակի տեղի ունեցող տարերային աղետներով, որոնք երկիրն առավել զգայուն են դարձնում կլիմայի ընթացող ու կանխատեսվող փոփոխության ազդեցությունների նկատմամբ.

14) ուսումնասիրվել է հանրապետության հանրակրթական դպրոցների սեյսմակայունությունը, ինչի արդյունքում Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հուլիսի 23-ի N 797-Ն որոշմամբ հաստատվել է Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական դպրոցների սեյսմիկ անվտանգության բարելավման 2015-2030 թվականների ծրագիրը.

15) փրկարարական ուժերը, ՄԱԿ-ի միջազգային որոնողափրկարարական խորհրդատվական խմբի չափանիշներին համապատասխան որակավորվելով, դարձել են միջազգային որոնողափրկարարական կառույցի անդամ.

16) ծավալուն և նպատակաուղղված գործընթաց է իրականացվել Ճգնաժամային կառավարման ազգային կենտրոնի ստեղծման և զարգացման ուղղությամբ, ՄԱԿ-ի զարգացման ծրագրի, Ճգնաժամերի կանխարգելման և վերականգնման բյուրոյի, Գլոբալ ռիսկի նույնականացման ծրագրի, Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գործակալության և այլ գործընկերների աջակցությամբ զգալի ներդրումներ են իրականացվել տեխնիկական և տեխնոլոգիական վերազինման, տեղեկատվության մշակման, գրանցման, աղետների ռիսկի կառավարման ուղղությամբ՝ ձևավորելով միջազգային չափորոշիչներին համապատասխան ճգնաժամային կառավարման ազգային կենտրոն.

17) ձևավորվել է միջազգային չափորոշիչներին համապատասխան «911» ծառայությունը.

18) ստեղծվել են մարզային ճգնաժամային կառավարման կենտրոններ՝ իրենց «911» ծառայություններով:

25. Աղետների ռիսկի նվազեցմանն ուղղված գործողությունների իրականացման բացթողումներն են.

1) աղետների ռիսկի կառավարման ապակենտրոնացման համար ձևավորվել են հիմքեր, սակայն բացակայում է ապակենտրոնացման ամբողջական գործընթացը: Այն կապված է նաև

հանրապետությունում տեղական ինքնակառավարման գործընթացի ոչ ամբողջական կայացման հետ.

2) հստակեցված չեն պետական կառավարման, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների և աղետների ռիսկի նվազեցման ոլորտում մի շարք դերակատարների գործառույթներին վերաբերող հարցերը.

3) աղետների ռիսկի նվազեցման ուղղությամբ բնակչության ուսուցման հայեցակարգի պահանջները կատարված են մասնակի, մասնավորապես, աղետների ռիսկի նվազեցման հարցերն ամբողջությամբ ներառված չեն նախադպրոցական կրթական ծրագրերում և միջին դպրոցի (5-9-րդ դասարաններ) առարկայական ծրագրերում, առկա են աղետների ռիսկի նվազեցման ուղղությամբ ուսուցման կազմակերպման խնդիրներ, որոնք պայմանավորված են համընդհանուր ներառական հանրակրթության՝ ներառյալ նախադպրոցական կրթության, անցման հետ, դեռևս չկա ուսումնական հաստատությունների անվտանգությանը վերաբերող միասնական տվյալների շտեմարան.

4) առկա են խնդիրներ կապված կլիմայի գլոբալ փոփոխության, դիմակայունության և հարմարվողականության հետ.

5) հանրապետությունում դեռևս արդյունավետ չի գործում աղետների ռիսկի նվազեցման իրազեկման համակարգն՝ իր առանձնահատուկ մեխանիզմներով ու գործիքակազմով.

6) դեռևս չի ձևավորվել աղետների ռիսկի գնահատման միասնական մեթոդաբանություն, մշտադիտարկման ամբողջական համակարգ՝ իր բոլոր բաղադրիչներով, այդ թվում նաև տեղեկատվական բազաներով.

7) առկա են աղետալի հետևանքների դեպքում արագ արձագանքման պատրաստվածության գործընթացներ, սակայն լուրջ բացթողումներ կան հետաղետային վերականգնման արդյունավետ կազմակերպման պատրաստվածության գործընթացում:

26. Բացթողումներն առկա են շատ երկրներում և հանդիսանում են համընդհանուր խնդիրներ, որոնք բացահայտվել են ՀԳԾ-ի իրականացման ընթացքում: Այդ խնդիրները կապված են աղետների ռիսկը պայմանավորող գործոնների վերացման և գործողությունների նպատակների ու առաջարկությունների ձևակերպման հետ, որն անհրաժեշտ է բոլոր մակարդակներում աղետների դիմակայունության հզորացման և իրականացման պատշաճ միջոցների ապահովման համար: Այդ խնդիրների լուծման համար անհրաժեշտ է մշակել գործողությունների ծրագիր, որը համապատասխան շահագրգիռ կողմերը կկարողանան իրականացնել միմյանց աջակցման և փոխլրացման միջոցով և, որը կօգնի սահմանել կառավարման ենթակա աղետների ռիսկը և կապահովի դիմակայունության ամրապնդման համար անհրաժեշտ ներդրումները:

27. ՀԳԾ-ի իրականացման գործընթացից հետո աղետները դեռևս շարունակում են խոչընդոտել կայուն զարգացման ուղղությամբ տարվող աշխատանքներին: Աղետների ռիսկի նվազեցման համար անհրաժեշտ է անդրադառնալ գոյություն ունեցող մարտահրավերներին և

նախապատրաստվել հաղթահարելու ապագա մարտահրավերները՝ իրականացնելով աղետների ռիսկի մշտադիտարկում, գնահատում, ըմբռնում և տեղեկատվության փոխանակում, աղետների ռիսկի կառավարման կարողությունների հզորացում համապատասխան հաստատություններում ու ոլորտներում, շահագրգիռ կողմերի մասնակցության ապահովում համապատասխան մակարդակներում, ներդրումներ մարդկանց, համայնքների և պետության տնտեսական, սոցիալական, առողջապահական, մշակութային և կրթական դիմակայության հզորացման մեջ, ինչպես նաև շրջակա միջավայրի պահպանության ոլորտում, այդ թվում տեխնոլոգիաների և հետազոտությունների միջոցով, տարատեսակ վտանգների համար նախատեսված վաղ ազդարարման համակարգերի, պատրաստվածության, արձագանքման, վերականգման և վերակառուցման հզորացում:

28. Աղետների ռիսկի կառավարման ոլորտի զարգացման միտումները.

1) աղետների ռիսկի կառավարման համակարգի նպատակային ապակենտրոնացումը, որն անհրաժեշտ է դարձնել գերակա ուղղություն, աջակցել և խթանել մասնակցային սկզբունքով տեղական մակարդակի, գիտական կառույցների, հասարակական կազմակերպությունների, համայնքի ակտիվ ներգրավումն աղետների ռիսկի կառավարման քաղաքականության մշակման և իրականացման գործընթացներում՝ ուշադրություն դարձնելով համայնքային ռիսկերի կառավարմանը և դիմակայուն համայնքների մշակույթի զարգացմանը.

2) աղետների ռիսկի կառավարման գործառույթների և կլիմայի փոփոխության գերակայությունների ներառումը երկրի զարգացման գործընթացներում.

3) կլիմայի փոփոխության նկատմամբ հարմարվողականության խնդիրը, որն անհրաժեշտ է գերակա ուղղություն համարել, քանի որ հանրապետության տարածքն ավելի զգայուն է դառնում կլիմայի փոփոխության ազդեցությունների նկատմամբ.

4) աղետների ռիսկի կառավարման ոլորտում նորարարական մոտեցումների, արդիական տեխնոլոգիաների, ներդրումների անհրաժեշտությունը, ուստի անհրաժեշտ է խթանել աղետների ռիսկի բացահայտման, գնահատման և մոդելավորման, աղետների ռիսկի նվազեցման ուղղությամբ բնակչության ուսուցման և իրազեկման մեթոդաբանության, սոցիալական պաշտպանության ոլորտի դիմակայունության բարձրացման, նորարարական տեխնալոգիաների կիրառման ուղղությամբ առաջավոր փորձի տեղայնացումն ու տարածումը, որը կբերի ռիսկի գիտակցումով պայմանավորված որոշումների կայացման՝ ազգային և տեղական մակարդակներում.

5) աղետների ռիսկի կառավարման ոլորտում իրականացվող բարեփոխումներում սոցիալական ուղղվածության ուժեղացումը, որն իրականացնելու համար անհրաժեշտ է աջակցել և խթանել մասնակցային սկզբունքով կրթական հաստատությունների, հաշմանդամություն ունեցող անձանց, սոցիալապես անապահով խմբերի և այլ դերակատարների ակտիվ ներգրավումն աղետների ռիսկի կառավարման քաղաքականության մշակման և իրականացման գործընթացներում և, որպես մարդասիրական օգնության և աղետների ռիսկի նվազեցման

բաղկացուցիչ մաս, առաջնահերթ համարել սոցիալական պաշտպանության, առողջապահական ծառայությունների ապահովման, անվտանգության և հասանելիության կարևորությունը.

6) միջազգային գործընթացների մշտական զարգացումը, ինչն ապահովելու համար անհրաժեշտ է մշտապես ուսումնասիրել և կիրառել աղետների ռիսկի կառավարման ոլորտում միջազգային առաջավոր փորձը, ինչը թելադրում է միջազգային գործընթացների մշտական իրականացում:

ԳԼՈՒԽ IV. ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

29. Ռազմավարությունն ուղղված է աղետներին դիմակայուն երկրի ձևավորմանը, աղետների ռիսկի և մարդկանց կյանքի, ապրուստի և առողջության, ինչպես նաև մարդկանց, կազմակերպությունների, համայնքների, պետության տնտեսական, ֆիզիկական, սոցիալական, մշակութային և բնապահպանական կորուստների նվազեցմանը՝ ապահովելով անհատի, հասարակության անվտանգության բարձրացումն ու երկրի կայուն զարգացումը:

30. Աղետների ռիսկի կառավարման նպատակն է պաշտպանել մարդկանց, նրանց առողջությունը, ունեցվածքը, ապրուստը, ինչպես նաև արտադրական, մշակութային ու բնապահպանական արժեքները:

31. Ռազմավարության տեսլականն է՝ «Հայաստանը դարձնել աղետներին դիմակայուն երկիր՝ զգալիորեն նվազեցնելով տարաբնույթ աղետներից մարդկանց կյանքին, երկրի տնտեսությանը և համայնքներին սպառնացող կորուստները՝ ձևավորելով ամուր հիմքեր կայուն զարգացման համար»:

32. Ռազմավարության հիմնական նպատակն է հզորացնել աղետների ռիսկի կառավարման կարողությունները՝ հանուն երկրի կայուն զարգացման:

33. Ռազմավարության գերակա ուղղություններն ու խնդիրներն են.

1) «Աղետների ռիսկի գիտակցում»՝ զարգացնել աղետների ռիսկի բացահայտման, գնահատման, վերլուծության, մոնիթորինգի և վաղ ազդարարման մշտապես զարգացող համակարգը՝ աղետների ռիսկի նվազեցման ոլորտում, ինչպես նաև երկրի զարգացման գործընթացներում ռիսկի գիտակցությամբ պայմանավորված արդյունավետ որոշումների կայացման համար.

2) «Աղետների ռիսկի կառավարման համակարգի զարգացում»՝ ապահովել աղետների ռիսկի կառավարման համակարգի հզորացումը՝ կառավարման գործառույթների արդյունավետության բարձրացման, նպատակային ապակենտրոնացման և համակարգի մասնակիցների կարողությունների մշտապես զարգացման միջոցով.

3) «Ներդրումներ աղետների ռիսկի նվազեցման ոլորտում»՝ ներառել աղետների ռիսկի նվազեցման գործառույթներն ու չափորոշիչները երկրի զարգացման ծրագրերում, ընդլայնել ոլորտում իրականացվող միջոցառումների մասնակիցների ցանկը, բարձրացնել

թափանցիկությունն՝ ապահովելով աղետների ռիսկի նվազեցման ոլորտում ներդրումները և նորարարական ծրագրերի իրականացման հնարավորությունները.

4) «Ավելի լավ ու արդյունավետ վերականգնում»՝ մշտապես հզորացնել երկրի կարողություններն ու հնարավորություններն աղետներին պատրաստվածության առումով, ինչպես նաև աղետներին արագ արձագանքման և հետաղետային առավել անվտանգ վերականգնման համար:

ԳԼՈՒԽ V. ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՌԻՍԿԵՐԸ ԵՎ ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՈԼՈՐՏԻ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ

34. Ռազմավարության արդյունավետ իրականացման խոչընդոտ հանդիսացող ռիսկերը և աղետների ռիսկի կառավարման ոլորտի մարտահրավերներն են.

1) քաղաքական ռիսկերը, ինչը ենթադրում է Հայաստանի Հանրապետության կառավարման համակարգի առաջնահերթություններից ռազմավարության դուրս մնալը՝ անհրաժեշտ իրավական, կազմակերպչական, կառուցվածքային և բյուջետային աջակցության ապահովման տեսանկյունից, կառավարման գործընթացի հիմնական դերակատարների կողմից անհրաժեշտ աջակցության բացակայությունը, այս ռիսկերի նվազեցման առումով սույն որոշմամբ նախատեսվում է ձևավորել ռազմավարության ղեկավարման խորհուրդ.

2) բյուրոկրատական դրսևորումների ռիսկի առկայությունը, պետական կառույցների միջև ոչ արդյունավետ համագործակցությունը և շահերի բախումը խոչընդոտում են աղետների ռիսկի կառավարման հարցերի լուծման ընթացքում լիարժեք համագործակցությանը, որոշումների կայացմանը և դրանց արդյունավետ իրականացմանը, ռազմավարությունը կնպաստի գործող հարաբերությունների հստակեցմանը և կանոնակարգմանը.

3) ռեսուրսների ոչ բավարար մակարդակի կամ բացակայության ռիսկը, որը հանգեցնում է որակական ու քանակական տեսակետից ռեսուրսների համախմբման և օգտագործման մեխանիզմների բացակայությանը.

ա. ֆինանսական և նյութական ռեսուրսների հասանելիությունը լուրջ խնդիրներ կարող է առաջացնել ռազմավարության գործողությունների ծրագրի իրականացման և նպատակներին հասնելու համար, ռեսուրսների սղության պայմաններում հարկ կլինի մշտապես վերանայել նախատեսվող ծրագրերի իրականացման առաջնահերթությունը՝ նախապատվությունը տալով ավելի արդյունավետ և երկար ազդեցություն ունեցող ծրագրերին,

բ. նոր ռեսուրսների ներգրավման առումով հարկավոր է խթանել մասնավոր հատվածի ներգրավումն աղետների ռիսկի նվազեցման ոլորտի ծրագրերին՝ ընդլայնելով պատվիրակված ծառայությունները և համատեղ ֆինանսավորվող նախաձեռնությունները, այս մոտեցումը նպաստավոր դաշտ կձևավորի նաև միջազգային գործընկերության հետագա ընդլայնման, ինչպես նաև նորարարական ծրագրերի իրականացման համար,

գ. ռազմավարության հաջողությամբ իրականացման հիմքում ընկած է մարդկային ռեսուրսը, մարդկանց, անձնակազմի նվիրվածությունը, մասնագիտական մակարդակը, արհեստավարժ մոտեցումը և բարձր մոտիվացիան, այս գործոնների բացակայության դեպքում ռազմավարության ծրագրերի իրականացումը կդառնա դժվար կամ անհնարին, այս խնդրի լուծումն անմիջականորեն կապված է աղետների ռիսկի կառավարման համակարգի հետագա զարգացման հետ, այդ գործընթացում հարկավոր է նախանշել և իրականացնել գործառույթների օպտիմալացմանն ուղղված միջոցառումներ, որոշումների կայացման և կարողությունների ապակենտրոնացման միջոցով հնարավոր կլինի բարձրացնել անձնակազմի մոտիվացիան՝ նույնիսկ ռեսուրսների սղության պայմաններում, անձնակազմի պատրաստման և վերապատրաստման գործում մեծ դերակատարում կարող են ունենալ Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիան, ինչպես նաև աղետների ռիսկի նվազեցման ոլորտում գործող միջազգային կառույցները,

դ. բնական ռեսուրսների օգտագործման խնդիրները հանգեցնում են ոչ միայն նոր բնապահպանական խնդիրների առաջացմանն, այլև բնակչության ու տարածքների խոցելիության մեծացմանը,

ե. ռազմավարական խնդիրների փուլային իրականացումը պայմանավորված է տվյալ փուլում համակարգի կարողությունների զարգացման մակարդակից, անհամաչափ կարողությունների դեպքում կվտանգվեն ինչպես տվյալ փուլի ռազմավարական խնդիրների լուծումը, այնպես էլ հետագա փուլերի իրականացման հնարավորությունները.

4) ռազմավարության իրականացման գործընթացի «լճացման» ռիսկը, կարող է վտանգել ռազմավարության իրականացման ողջ ընթացքը, ինչպես նաև նախկինում ունեցած ձեռքբերումները, շատ դեպքերում ընդունված և հաստատված ռազմավարությունները տարիների ընթացքում կորցնում են իրենց արդիականությունը, հետ են մնում միջավայրի զարգացման գործընթացներից, այս ոիսկի նվազեցման համար հարկավոր կլինի ձևավորել ռազմավարության իրականացման գնահատման և մոնիթորինգի արդյունավետ գործընթաց աղետների ռիսկի կառավարման ոլորտի պատասխանատու մարմնի կողմից, մոնիթորինգի արդյունքները հնարավորություն կտան ձևավորելու մշտապես թարմացվող տեղեկատվական հենք՝ ռազմավարական խնդիրների վերաբերյալ արդյունավետ որոշումների իրականացման, աղետների ռիսկի կառավարման ոլորտում հաշվետվողականության և թափանցիկության բարձրացման, հանրային իրազեկման, ինչպես նաև համագործակցության դաշտի բարելավման համար.

5) երկրի կայուն զարգացմանը խոչընդոտող ռիսկերից՝ պատերազմները, հակամարտությունները, տնտեսական, ֆինանսական ճգնաժամերը և դրանց հետևանքները կապված են երկրի և տնտեսության զարգացման հետ, այս ռիսկերը պայմանավորված չեն

ռազմավարության իրականացման գործընթացով, սակայն դրանք զգալիորեն կարող են ազդել ռազմավարության իրականացման վրա.

6) կոռուպցիոն ռիսկի առկայությունը հանգեցնում է աղետների ռիսկի կառավարման ոլորտում կարողությունների և ռեսուրսների նպատակային օգտագործման անարդյունավետությանը, իսկ որոշ դեպքերում նաև՝ նախաձեռնությունների և ծրագրերի խափանմանը, սակավ միջոցների փոշիացմանը.

7) բնական վտանգավոր երևույթները, որոնք չեն առաջացնում աղետներ, քանի դեռ չեն զուգակցվում բնակչության և ենթակառուցվածքների բարձր խոցելիության և ցածր դիմադրողականության հետ, այս տեսանկյունից կլիմայի փոփոխության ազդեցությունը հնարավոր է վտանգավոր հիդրոօդերևութաբանական և կլիմայական երևույթների սպասվելիք աճի դեպքում և վտանգավոր բնական երևույթների նկատմամբ հասարակության խոցելիության աստիճանի բարձրացման դեպքում, որի պատճառներից են էկոհամակարգերի դեգրադացիան, բնական պաշարների և ջրային ռեսուրսների նվազումը, պարենամթերքների, կենսապահովման միջոցների անբավարար մակարդակը, ուստի արդիական խնդիր է կլիմայի փոփոխության ազդեցության գնահատումը տնտեսության և էկոհամակարգերի վրա, այդ փոփոխություններին դիմակայելու համար հարմարվողականության ծրագրերի մշակումը և դրանց ընդգրկումն ազգային և տեղական մակարդակներում.

8) տարածաշրջանային աղետների վտանգները կարող են առաջացնել անդրսահմանային արտակարգ իրավիճակներ, թերի համագործակցությունը հանգեցնում է տարածաշրջանային խնդիրների անարդյունավետ լուծմանը, կարողությունների և ռեսուրսների ընդգրկման մեխանիզմների բացակայությանը՝ խոչընդոտելով անդրսահմանային վտանգների կանխմանն ու կանխարգելմանը.

9) անվտանգության մշակույթի անկատարությունը և աղետների ռիսկի կառավարման ոլորտի գիտելիքների պակասը նպաստում են նոր մարտահրավերների առաջացմանը, վտանգներից խոցելիության մեծացմանը և օժանդակում աղետների ռիսկի մեծացմանը.

10) տարածքային զարգացման ոչ արդյունավետ պլանավորումը և անկառավարելի ուրբանիզացիան հանգեցնում են աղետների բարձր ռիսկի գոտիներում բնակչության խտության անցանկալի աճին, տարածական առումով ոչ հավասարակշռված տարաբնակեցման համակարգի ձևավորմանը՝ նպաստելով նոր ռիսկերի առաջացմանը և խոցելիության մեծացմանը.

11) աղետների ռիսկի կառավարման ոլորտում կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հնարավորությունների հետ կապված խնդիրների առկայությունը խոչընդոտում է նրանց լիարժեք ներգրավմանն աղետների ռիսկի կառավարման գործընթացում, որը հանգեցնում է մարդկային ռեսուրսների և կարողությունների ոչ արդյունավետ օգտագործմանը.

12) աղետների ռիսկի կառավարման գործընթացներում հասարակության սոցիալապես անապահով, հատուկ կարիքներով և խոցելի խմբերի (կանայք, երեխաներ, տարեցներ, հաշմանդամություն ունեցող անձինք, քրոնիկ հիվանդներ) ներգրավվածության թույլ մակարդակը

թույլ չի տալիս ամբողջովին հաշվի առնելու հասարակության այդ շերտերի հատուկ կարիքներն ինչպես աղետից առաջ, այնպես էլ աղետից հետո, ուստի անհրաժեշտ է նրանց ինտեգրել աղետների ռիսկի կառավարման բոլոր գործընթացներում.

13) բնական աղետների և պատերազմական գործողությունների հետևանքով առաջացած զանգվածային միգրացիոն տեղաշարժերի կառավարման պլանի բացակայությունը.

14) աղետներին արձագանքման ոլորտում օրենսդրական դաշտի կատարելագործումը, որն անհրաժեշտ է հանրապետությունում տեղի ունեցող զարգացումների և միջազգային զարգացումներին ինտեգրման գործընթացում.

15) մշակութային, կրոնական, պատմական նշանակություն ունեցող կառույցների ու տարածքների դիմակայունության ցածր մակարդակը, դրանց պահպանման ու շահագործման ծրագրերում աղետների կանխարգելման միջոցառումների բացակայությունը թույլ չեն տալիս որակական նոր մակարդակի վրա բարձրացնել զբոսաշրջության զարգացումը Հայաստանում.

16) հետաղետային վերականգնողական գործողությունների պլանավորման բացակայությունը թույլ չի տալիս երկրում ունենալու վերականգնման միասնական և համակարգված գործընթաց, անհրաժեշտ է վերակառուցման ամբողջ ընթացքում, ինչպես նաև ազգային և տեղական մակարդակների զարգացման ծրագրերում, աղետների ռիսկի կառավարման գործընթացների ներառումը, բնակչությանը աղետի և ռիսկի գոտիներից տարահանման պատասխանատու պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կարողությունների ամրապնդումը.

17) քաղաքաշինության և հողօգտագործման բնագավառներում աղետների ռիսկի գնահատման անբավարար մակարդակը, հողերի դեգրադացիան, հողօգտագործման և քաղաքաշինական նորմերի խախտումները տարածքների և բնակչության համար ստեղծում են նոր ռիսկեր ու վտանգներ, ուստի համայնքների զարգացման պլաններում պետք է ներառել աղետների ռիսկի, խոցելիության և կարողությունների գնահատման գործընթացներ.

18) աղետներից ապահովագրական համակարգի ոչ արդյունավետ գործունեությունը, ինչը թուլացնում է աղետների ռիսկի կառավարման ֆինանսական գործընթացների ճկունությունը՝ հիմնական ծանրաբեռնվածությունը թողնելով պետական և համայնքային բյուջեների վրա ու հանգեցնում է ֆինանսական կարողությունների նվազեցմանը և բնակչության ու տարածքների խոցելիության մեծացմանը:

ԳԼՈՒԽ VI. ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

35. Աղետների ռիսկի կառավարման ոլորտի ներկա իրավիճակից և հետագա զարգացման միտումներից ելնելով՝ ռազմավարության իրականացման հիմնական գործողություններն են.

1) աղետների ռիսկի կառավարման ոլորտի իրավական և կազմակերպական դաշտի կատարելագործմանն ուղղված գործողությունները վերաբերում են օրենսդրության բարելավմանը,

կանոնակարգերի և աշխատակարգերի հստակեցմանը, ինչպես նաև միջազգային գործընկերների հետ արդյունավետ համագործակցությանը.

2) հաստատությունների մակարդակով աղետների ռիսկի կառավարման ոլորտի զարգացմանն ուղղված գործողություններում կարևորվում են կառույցների և կազմակերպությունների դերերի հստակ բաշխումն ու համակարգումը, գործունեության և հաղորդակցության արդյունավետության բարձրացումը, միջազգային համագործակցության հետևողական ընդլայնումը, որոշումների կայացման, ռեսուրսների տեղաբաշխման և պարտավորությունների նպատակաուղղված ապակենտրոնացումը.

3) մարդկային ռեսուրսների զարգացմանն ուղղված գործողությունների իրականացման ուղղությամբ կարևոր են համակարգում և գործընկեր կառույցներում ներգրավված անձնակազմի գիտելիքների, հմտությունների ու կարողությունների բարելավումը, մոտիվացիայի բարձրացումը, գործընկեր կառույցների հետ նորարարական ծրագրերի իրականացումը.

4) գիտական և տեղեկատվական հենքի ամրապնդմանն ուղղված գործողությունները նախատեսում են, որ աղետների ռիսկի կառավարման ոլորտում ստեղծված գիտական և տեղեկատվական բազաները հարկավոր է մշտապես զարգացնել, արդիականացնել և հասանելի դարձնել ոլորտի մասնագետներին և բնակչությանը, տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման և հանրային իրազեկման արդյունավետության բարձրացումը կնպաստի աղետների ռիսկի կառավարման ոլորտում բնակչության լայն շերտերի ներգրավմանը և դիմակայունության ամրապնդմանը.

5) աղետների ռիսկի նվազեցման ոլորտում ներդրումային ծրագրերի իրականացման հնարավորությունների ընդլայնմանն ուղղված գործողությունները. Ոլորտի առաջընթաց զարգացումն անհնար է առանց մասնավոր հատվածի ներդրումների, այդ առումով, իրականացվող ծրագրերում հարկավոր է մշտապես ավելացնել հանրային ու մասնավոր հատվածի մասնակցության հնարավորությունները.

6) աղետների ռիսկի կառավարման կարողությունների զարգացմանն ուղղված գործողությունները:

36. Ռազմավարության իրականացման գործողությունների ծրագրով նախատեսված միջոցառումները ենթակա են մոնիթորինգի:

ԳԼՈՒԽ VII. ՇԱՀԱՌՈՒՆԵՐԸ ԵՎ ԴԵՐԱԿԱՏԱՐՆԵՐԸ

37. Երկրի կայուն զարգացման ապահովման համար կարևորագույն գործոն է հանդիսանում հանրապետությունում աղետների ռիսկի կառավարման արդյունավետ համակարգի ձևավորումն ու զարգացումը՝ տնտեսության բոլոր ոլորտների և հասարակության առավել լայն շերտերի ներգրավմամբ:

38. Ռազմավարության իրականացումն ուղղված է երկրում աղետների կանխարգելմանը, ռիսկի նվազեցմանը, արտակարգ իրավիճակների հետևանքների նվազեցմանն ու վերացմանը, ոլորտի կառավարման համակարգի կարողությունների զարգացմանն ու հզորացմանը: Այդ իսկ պատճառով ակնհայտ է, որ ռազմավարության իրականացման շահառու է հանդիսանում հանրապետության ամբողջ ազգաբնակչությունը:

39. Աղետների ռիսկի կառավարման համակարգը գործընթացների և գործառույթների ամբողջական շրջանակ է, որի նպատակն է հզորացնել աղետներին դիմակայելու կարողությունները, նպաստել տարածքային կայուն զարգացմանը և աղետակայուն երկրի կայացմանը: Այն նպատակաուղղված է կանխելու, կանխարգելելու և մեղմացնելու վտանգները, նվազեցնելու դրանց հնարավոր բացասական ազդեցությունը և վնասների չափը:

40. Աղետների ռիսկի կառավարման համակարգը պետության զարգացման կարևոր գործոններից մեկն է: Այն պահանջում է համախմբված գործողությունների իրականացում՝ պետական, մարզային, համայնքների և համայնքային ենթակայության կառույցների, քաղաքացիական հասարակության, գիտական հաստատությունների, միջազգային կազմակերպությունների, ինչպես նաև մասնավոր հատվածի կողմից:

41. Աղետների ռիսկի կառավարման համակարգի ձևավորման և զարգացման ապահովումը պահանջում է ռազմավարության նպատակների իրականացում, նոր խնդիրների բացահայտում, աղետների ռիսկի կառավարման ոլորտում ներգրավված դերակատարների իրավունքների ու գործառույթների հստակեցում, գործառույթների կրկնությունների բացառում՝ հիմք հանդիսանալով երկրում աղետների ռիսկի կառավարման կայուն և շարունակական գործընթացի ապահովման և աղետակայուն երկրի կառուցման համար:

42. Աղետների ռիսկի կառավարման գործընթացը չի հանդիսանում որևէ կառույցի մենաշնորհ: Այն պահանջում է համապարփակ մոտեցում, երկրի բոլոր կառույցների և ռեսուրսների ակտիվ ներգրավում, քաղաքական, նյութատեխնիկական միջոցների, գիտական ինչպես նաև մասնակցային բաղադրիչների կիրառում:

43. Աղետների ռիսկի կառավարման ոլորտի ընդհանուր ղեկավարումն իրականացնում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

44. Աղետների ռիսկի կառավարման գործընթացների համակարգման և մոնիթորինգի լիազոր մարմինը Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարությունն է:

45. Աղետների ռիսկի կառավարման համակարգի դերակատարներ են հանդիսանում պետական կառավարման մարմինները, տարածքային կառավարման պետական մարմինները, տեղական ինքնակառավարման մարմինները, հասարակական և մասնավոր կազմակերպությունների կառավարման մարմինները, «Աղետների ռիսկի նվազեցման ազգային պլատֆորմ» հիմնադրամը, Հայաստանում գործող միջազգային կազմակերպությունները և դիվանագիտական ներկայացուցչությունները, աղետների ռիսկի կառավարման գործունեություն

ծավալելու նպատակով տարբեր մակարդակների ներկայացուցիչների ներգրավմամբ ստեղծված հանձնաժողովները: Հիմնական դերակատարներն են.

1) Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարությունը, որը մշակում, իրականացնում և համակարգում է օրենքով և այլ իրավական ակտերով իր իրավասությանը վերապահված քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակ-ներում բնակչության պաշտպանության բնագավառներում Հայաստանի Հանրապետության կառավարության քաղաքականությունը, արտակարգ իրավիճակների կանխարգելման, դրանց հետևանքների նվազեցման ու վերացման աշխատանքները, Հայաստանի տարածքում սեյսմիկ ռիսկի նվազեցման ուղղությամբ տարվող աշխատանքները, հնարավոր երկրաշարժերի կանխատեսման համակարգերի կառավարման ապահովումը, բնակչության պաշտպանության միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ նյութական պաշարների պահուստի ստեղծումը, պահպանումը և թարմացումը, հրդեհային անվտանգության կանոնների, տեխնիկական անվտանգության նորմերի ու պահանջների պահպանման ու կատարման նկատմամբ վերահսկողությունը, հիդրոօդերևութաբանական երևույթների ռեժիմային և հատուկ դիտարկումների, ուսումնասիրությունների, կանխատեսումների աշխատանքները, արտադրական վտանգավոր օբյեկտներում տեխնիկական անվտանգության ապահովման փորձաքննությունը, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների ղեկավար կազմի ու մասնագետների, բնակչության աղետների ռիսկի նվազեցման ուսուցումը, արտակարգ իրավիճակներում տեղեկատվության կառավարման և ընդհանուր իրազեկման հետ կապված գործընթացները, արտակարգ իրավիճակների կառավարման օպերատիվությունը, արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության վերաբերյալ տեղեկատվական գործընթացների կենտրոնացումը, տեղեկատվության ժամանակակից եղանակներով օպերատիվ արտացոլումը, բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության գործընթացի կառավարման արդյունավետության բարձրացումը.

2) Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարությունը, որը մասնակցում է արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության բնագավառներում տարածքային կառավարման ու տեղական ինքնակառավարման մարմինների գործունեությանը, ինչպես նաև աղետների ռիսկի նվազեցմանն ուղղված մարզպետարանների և համայնքների գործունեությանը, նպաստում է տեղական մակարդակում արտակարգ իրավիճակների կանխարգելման, դրանց հետևանքների նվազեցման ու վերացման աշխատանքների իրականացմանը, դիմակայուն համայնքների ձևավորմանը, համայնքային զարգացման ծրագրերում աղետների ռիսկի կառավարման միջացառումների ներառմանն ու իրականացմանը, համայնքներում և համայնքային ենթակայության կազմակերպություններում աղետների ռիսկի կառավարման կարողությունների զարգացմանն ուղղված վարժանքների պարբերաբար կազմակերպմանն ու անցկացմանը.

3) Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությունը, որը իրականացնում է ընդհանուր և մասնագիտացված բժշկական հաստատությունների պատրաստության բերումն ու համալրումն անհրաժեշտ բժշկասանիտարական գույքով և դեղերով, որպես մարդասիրական օգնություն ներմուծվող դեղերի որակի նկատմամբ հսկողությունը և անհրաժեշտության դեպքում դրանց պարզեցված կարգով հավաստագրումը, օտարերկրյա պետություններից անհրաժեշտ դեղամիջոցների պահանջարկի հայտի նախապատրաստումը և այն Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարություն ներկայացնելը, միջազգային բժշկական ուժերի գործողությունների համակարգումը, ինչպես նաև աղետների ռիսկի կառավարման բաղադրիչի ներառումը ոլորտային զարգացման ծրագրերում, քիմիական վթարների դեպքում մասնակցում է տարահանված բնակչության կենսաապահովմանը, կենսաբանական վթարների ժամանակ իրականացնում է իրավիճակի գնահատում, սանիտարահամաճարակային անվտանգության ապահովում, օդի, հողի, ջրի և կենսանմուշների լաբորատոր հետազոտություններ, կենսաբանական վարակման գոտիների սահմանների որոշում, համաճարակաբանական, կենդանամակաբուծաբանական և միջատաբանական հսկողություն, կանխարգելիչ և հակահամաճարակային միջոցառումներ, համապատասխան եզրակացություն է տալիս աղետի հետևանքների սանիտարահամաճա-րակային իրավիճակի վերաբերյալ, անհրաժեշտության դեպքում առաջարկություն է ներկայացնում կարանտին սահմանելու վերաբերյալ.

4) Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունը, որը համակարգում է միջազգային համագործակցությունը, միջազգային մարդասիրական ծրագրերի իրականացումն ու փոխօգնության տրամադրման գործընթացները: Ապահովում է միջազգային համագործակցությունը, միջազգային պայմանագրերի կնքման գործընթացները, մարդասիրական օգնության կազմակերպման գործընթացները, միջազգային փրկարարական ուժերի և կառույցների մասնակցությունն աղետների հետևանքների վերացման աշխատանքներին.

5) Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարությունը, որն իրակա-նացնում է էկոլոգիական անվտանգության կարգավորումն ու վերահսկումը, շրջակա միջավայրի պահպանության և մոնիթորինգի ապահովումը, ինչպես նաև էկոկրթության և կլիմայի փոփոխության հիմնախնդիրների հետ կապված գործառույթները, իրականացնում է նաև աղետների ռիսկի կառավարման բաղադրիչի ներառումը ոլորտային զարգացման ծրագրերում.

6) Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությունը, որն իրակա-նացնում է անասնաբուժասանիտարիայի, սննդամթերքի անվտանգության և բուսասանիտարիայի ոլորտի ծառայություններ, առաջնային սերմնաբուծության, պարենամթերքի ֆիզիկական մատչելիության ապահովման միջոցառումներ, անտառների պահպանություն, պաշտպանություն, վերարտադրություն, օգտագործում և կայուն կառավարում, անտառների պետական մոնիթորինգ, հակասելավային միջոցառումներ, ներառում է աղետների ռիսկի կառավարման բաղադրիչը ոլորտային զարգացման ծրագրերում.

7) Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարությունը, որն իրականացնում է Հայկական ատոմային էլեկտրակայանի միջուկային և (կամ) ճառագայթային վթարների դեպքում էներգամատակարարման ցանցերի վիճակի հետազոտման, Հայաստանի Հանրապետության տարածքում էներգամատակարարման կայունության ապահովման, տարահանված համայնքների վարչական տարածքում գազամատակարարման և էներգամատակարարման դադարեցման, վթարային պլանավորման գոտիների բնակավայրերի էներգամատակարարման ապահովման միջոցառումներ, ինչպես նաև աղետների ռիսկի կառավարման բաղադրիչի ներառումը ոլորտային զարգացման ծրագրերում, իր լիազորությունների շրջանակներում վերահսկում է բաց և ստորգետնյա եղանակով մշակվող հանքավայրերի շահագործումը՝ ինչպես առօրյա պայմաններում, այնպես էլ աղետների ծագման դեպքում.

8) Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունը, որն իրականացնում է աղետների ռիսկի նվազեցման և քաղաքացիական պաշտպանության հարցերով ուսուցման կազմակերպումը հանրապետության բոլոր ուսումնական հաստատություններում, արտակարգ իրավիճակներում ապահովում է ուսուցման պրոցեսի անընդհատությունն ու շարունակականությունը, համակարգում է ուսումնական հաստատություններում աղետների ռիսկի նվազեցման և արտակարգ իրավիճակներում գործելու պլանների ներդրման, հանրապետության կրթական համակարգում աղետների ռիսկի նվազեցման ուսուցման և կրթական ոլորտում իրականացվող ծրագրերում աղետների ռիսկի կառավարման բաղադրիչի ներառման գործընթացները, իր ենթակայության կազմակերպություններում պարբերաբար կազմակերպում է աղետների ռիսկի կառավարման կարողությունների զարգացմանն ուղղված միջոցառումներ.

9) Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը, որը մշակում է աղետների ռիսկի կառավարման ոլորտում բնակչության պաշտպանության միջոցառումների ֆինանսական ապահովման և դրանց ֆինանսավորման հարցերի վերաբերյալ առաջարկությունները.

10) Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարությունը, որն ապահովում է տնտեսության կայուն գործունեությունը, պարենային և նյութատեխնիկական մատակարարումը, իրականացնում է քաղաքացիական պաշտպանության տեխնիկական միջոցների չափագիտական հսկողությունը, ոլորտի զարգացման ծրագրերում աղետների ռիսկի կառավարման բաղադրիչի ներառումը.

11) Հայաստանի Հանրապետության միջազգային տնտեսական ինտեգրման և բարեփոխումների նախարարությունը, որն աջակցում է օտարերկրյա պետություններից և միջազգային կառույցներից, աղետի հետևանքների վերացման նպատակով, փրկարարական, վթարավերականգնողական, բժշկական ստորաբաժանումների ներգրավման, նյութական օգնության ստանալու գործընթացների կազմակերպմանը.

12) Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը, որը, փոխգործակցելով մարզպետարանների հետ, տուժած բնակչության տեղաբաշխման բնակավայրերում կազմակերպում և համակարգում է տուժած բնակչության կենսաապահովման և սոցիալական պաշտպանության հարցերին վերաբերող ծրագրերի շարունակականությունն՝ օգտագործելով աղետի գոտում պահպանված բնակելի տարածքներն ու սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային կենտրոնների և իր ենթակայությանը հանձնված պետական ոչ առևտրային կազմակերպությունների ռեսուրսները, ներառում է աղետների ռիսկի կառավարման բաղադրիչը ոլորտային զարգացման ծրագրերում.

13) Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարությունը, որը կազմակերպում է ոլորտում աղետների ռիսկի կառավարման գնահատման գործընթացները, համակարգում աղետների ռիսկի կառավարման ծրագրերի իրագործումը և իրականացնում է մշակութային արժեքների պահպանումը և անհրաժեշտության դեպքում դրանց տարահանման միջոցառումների կազմակերպումը.

14) Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությունը, որը մասնակցում է արտակարգ իրավիճակների ժամանակ փրկարարական աշխատանքներին, փրկարարական և վթարավերականգնողական աշխատանքների իրականացման համար տրամադրում է ուժեր ու միջոցներ.

15) Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունը, որն աջակցում է երիտասարդների ներգրավմանը Հայաստանում հասարակական, կամավորական փրկարարական շարժման ձևավորման ու զարգացման գործընթացների իրականացմանը, կամավորական հրշեջ-փրկարարական ջոկատների ստեղծմանը, իրականացնում է աղետների ռիսկի կառավարման բաղադրիչի ներառումը ոլորտային զարգացման ծրագրերում.

16) Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարությունը, որը համակարգում է սփյուռքի կազմակերպությունների կողմից իրականացվող ծրագրերում աղետների ռիսկի կառավարման բաղադրիչի ներառումը Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության հետ համագործակցությամբ, կազմակերպում է օտարերկրյա պետություններում գործող սփյուռքի կազմակերպությունների կողմից աղետների ժամանակ անհրաժեշտ մարդասիրական օգնության տրամադրումը.

17) Հայաստանի Հանրապետության տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությունը, որը վերահսկում է տրանսպորտային հաղորդակցության ուղիների, մայրուղիների, կառույցների, կառուցման ծրագրերում աղետների ռիսկի կառավարման բաղադրիչի ներառումը, ինչպես նաև մշակում, կազմակերպում, համակարգում և վերահսկում է դրանց խոցելիության նվազեցման ծրագրերը, ապահովում է բնակչության տարահանման միջոցառումների, հիվանդների ու տուժածների, փրկարարական ուժերի նյութատեխնիկական

միջոցների տեղափոխման և բնակչության պաշտպանության միջոցառումների կազմակերպման համար անհրաժեշտ տրանսպորտով և կապուղիներով.

18) Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչությունը, որը կազմակերպում է իր ենթակայության կազմակերպությունների կայուն գործունեությունը, համակարգի աշխատողների և օդանավակայաններում գտնվող ուղևորների պաշտպանությունը, Հայաստանի Հանրապետության տարածքում առաջացած արտակարգ իրավիճակների արձագանքման, մարդասիրական օգնության և միջազգային փրկարարական ստորաբաժանումների ընդունման, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կողմից մարդասիրական օգնության ու փրկարարական ստորաբաժանումների՝ այլ երկիր ուղարկման հիմնահարցերում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի փետրվարի 2-ի N 105-Ն որոշմամբ, որով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ավիացիայի օդանավակայանների և Հայաստանի Հանրապետության պետական կառավարման մարմինների գործողություններն ու փոխհամագործակցության ուղղությունները.

19) Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեն, որն ապահովում է բոլոր նոր կառուցվող ու վերակառուցվող հատուկ և կարևոր, առողջապահական, կրթական, սոցիալական և հասարակական այլ նշանակության օբյեկտների շինարարական աշխատանքների ամբողջ ցիկլի ընթացքում աղետակայուն քաղաքաշինական նորմերի պահպանումը, պատշաճ տեխնիկական վերահսկողության և մոնիթորինգի իրականացումը: Կազմակերպում և համակարգում է սեյսմակայուն շինարարությանը վերաբերող գիտական հետազոտությունների և փորձարարակոնստրուկտորական աշխատանքների, սեյսմակայուն շինարարության բնագավառի նորմատիվ տեխնիկական փաստաթղթերի մշակման գործընթացի, տարածքների հետազոտության և ճարտարագիտական պաշտպանության աշխատանքները.

20) Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն, որն իրականացնում է ներմուծվող մարդասիրական օգնության նկատմամբ հսկողության իրականացումը, փրկարարական տեխնիկայի, սարքավորումների ու գույքի ներկրման և արտահանման գործընթացների պարզեցված ընթացակարգերի կիրառումը.

21) Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտեն, որը կազմակերպում ու անցկացնում է ատոմային էներգիայի օգտագործման բնագավառի աշխատանքների, օբյեկտների և սարքավորումների անվտանգության գնահատումը, փորձաքննությունը, իրավիճակից ելնելով կազմակերպում է Հայկական ատոմային էլեկտրակայանի աշխատանքի անհապաղ դադարեցումը.

22) Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայությունը, որն իր իրավասությունների սահմաններում համակարգում

է պետական կարևորագույն նշանակություն ունեցող օբյեկտների անվտանգության ապահովման գործառույթները.

23) Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանությունը, որը կազմակերպում ու ապահովում է արտակարգ իրավիճակների դեպքում համայնքներում, պաշտպանական, տնտեսության համար ռազմավարական նշանակություն ունեցող, ինչպես նաև բնակչության պաշտպանության տեսանկյունից բարձր վտանգավորություն ներկայացնող կազմակերպություններում, պահպանվող օբյեկտներում, բնակչության տարահանման հավաքակայաններում և տեղաբաշխման վայրերում, փրկարարական ուժերի և միջոցների շարժման երթուղիներում հասարակական կարգի, պետական սեփականության, բնակչության ունեցվածքի պահպանությունը, տարահանման անխափան երթևեկությունը.

24) Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեն, որը պետական կառավարման մարմիններին սահմանված կարգով տրամադրում է կադաստրային, տեղագրական կամ հողաշինարարական քարտեզները, այդ քարտեզները պետական կառավարման մարմինների կողմից այլ անձանց՝ ժամանած միջազգային ուժերին կարող են փոխանցվել միայն Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման հիման վրա, որի դիմաց անշարժ գույքի պետական ռեգիստրին հատկացվում է համապատասխան փոխհատուցում.

25) Հայաստանի հանրային հեռուստառադիոընկերության խորհուրդը, որը կազմակերպում է իր ենթակայության կազմակերպությունների կայուն գործունեությունը, պահուստային շարժական և շարժական արբանյակային կայանների ծավալումը և աշխատանքը, իրականացնում է արտակարգ իրավիճակներում բնակչության վարքականոնների մասին իրազեկումը, փրկարարական աշխատանքների ընթացքի և աղետի հետևանքների վերացման վերաբերյալ հաղորդումների հեռարձակումը.

26) Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայությունը, որը նպաստում է միջազգային նորմերին համապատասխան աղետներին առնչվող վիճակագրական միասնական տեղեկատվական համակարգի ձևավորմանը, համապատասխան կառավարման մարմիններում աղետների ռիսկի կառավարման դրույթների ներառմամբ վարչական ռեգիստրների վարման գործընթացի կատարելագործմանը,

27) Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհուրդը, որը նպաստում է աղետների ռիսկի կառավարման հարցերի ներառմանը քաղաքացիական ծառայողների վերապատրաստման ծրագրերում.

28) Երևանի քաղաքապետարանը և Հայաստանի Հանրապետության համայնքապետարանները, որոնք պարբերաբար իրականացնում են սպառնացող աղետների ռիսկի, համայնքի խոցելիության և կարողությունների գնահատում, ապահովում են համայնքային զարգացման ծրագրերում աղետների ռիսկի նվազեցման միջոցառումների և գործողությունների

ներառումը, ռիսկերի էլեկտրոնային քարտեզի գործարկումը և ընթացիկ թարմացումը, գլխավոր հատակագծերի ճշգրտման գործընթացում աղետների ռիսկի կառավարման չափորոշիչների ներգրավումը, աղետների ռիսկի կառավարման տեղեկատվական թափանցիկ համակարգի ձևավորումը, երկրատեղեկատվական միասնական համակարգի ստեղծումը, բնակչության տարահանման համար համապատասխան բազային տարածքների հատկացումը, վաղ ազդարարման համակարգերի ներդրումը, շահագործումն ու պահպանումը, անվտանգության մշակույթի ձևավորումը և բնակչության իրազեկման մակարդակի բարձրացումը.

29) հասարակական և գիտական կազմակերպությունները, որոնք հանդիսանում են կարևոր դերակատարներ և նպաստում են աղետների ռիսկի կառավարման համակարգի գիտական ներուժի զարգացմանը, ինչպես նաև համայնքներում աղետների ռիսկի կառավարման խնդիրների իրականացմանը.

30) ապահովագրական ընկերությունները, որոնք աջակցում են աղետներից ապահովագրման համակարգի կայացմանը և նպաստում դրա հետագա զարգացմանը.

31) միջազգային գործընկերները, որոնք օժանդակություն են ցուցաբերում Հայաստանի Հանրապետությունում աղետների ռիսկի կառավարման համակարգի ձևավորմանն ու զարգացմանը: Հիմնական գործընկերների թվում են՝ ՄԱԿ-ի զարգացման ծրագիրը, ՄԱԿ-ի մանկական հիմնադրամը, ՄԱԿ-ի մարդասիրական գործերի համակարգման գրասենյակը, Ճապոնիայի միջազգային համագործակցության գործակալությունը, Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գործակալությունը, Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպությունը, Համաշխարհային բանկը, Ասիական զարգացման բանկը, Գերմանիայի տեխնիկական օժանդակության գործակալությունը, Հայկական կարմիր խաչի ընկերությունը, «ՕքսԵՋեն» հիմնադրամը, «Սեյվ դը չիլդրեն ինթերնեյշնլ» կազմակերպությունը, «Վորլդ Վիժն» կազմակերպությունը, ԱՄՔՈՐ կազմակերպությունը և այլն:

ԳԼՈՒԽ VIII. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԸ

46. Ազգային ջանքերը և կարողությունները լրացնելու նպատակով հարկավոր է զարգացնել միջազգային համագործակցությունը տարբեր երկրների և միջազգային կազմակերպությունների հետ:

47. Աղետների ռիսկի կառավարման տեսանկյունից առավել մեծ փորձ ունեցող երկրների շարքում կարելի է առանձնացնել Մեծ Բրիտանիան, Ավստրալիան, Ճապոնիան, որտեղ աղետների ռիսկի կառավարման ռազմավարությունները հանդիսանում են ազգային անվտանգության կամ ճգնաժամային կառավարման ազգային հայեցակարգի մաս: Դրանք գործում են ազգային, տարածքային և տեղական մակարդակներում:

48. Ճապոնիայի միջազգային համագործակցության գործակալության կողմից Հայաստանի Հանրապետությունում սեյսմիկ ռիսկի գնահատման և կառավարման պլանավորման ծրագրի

շրջանակներում իրականացվել է Երևան քաղաքի սեյսմիկ ռիսկի գնահատման ու կառավարման պլանավորման ծրագիրը: Գործակալության կողմից իրականացվում է Հայաստանում սողանքների ռիսկի նվազեցմանն ուղղված սողանքների մշտադիտարկման և գնահատման համակարգերի ձևավորման ծրագիրը:

49. Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գործակալության հետ համատեղ իրականացվել են աղետներին պատրաստվածության մակարդակի բարձրացման և փրկարարական ուժերի կարողությունների հզորացման ծրագրեր, որոնք լուրջ դեր են ունեցել փրկարարական ուժերի պատրաստվածությունը միջազգային չափորոշիչների պահանջներին համապատասխանեցնելու հարցում:

50. Գերմանիայի Դաշնության կարմիր խաչի, Ճգնաժամային կառավարման ազգային կենտրոնի, «Աղետների ռիսկի նվազեցման ազգային պլատֆորմ» հիմնադրամի և Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության Ճգնաճամային կառավարման պետական ակադեմիայի հետ համատեղ իրականացվել է ճգնաժամային կառավարման կենտրոնների և «911» ծառայության օպերատորների, հրահանգիչների և դիսպետչերների պատրաստման ծրագիր, որի արդյունքում այն ներառվել է ակադեմիայի կրթական ծրագրերում:

51. Եվրամիության օժանդակությամբ ԱՄՆ-ում իրականացվել են Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների, գյուղատնտեսության, առողջապահության նախարարությունների մասնագետների պատրաստման ծրագրեր՝ ուղղված կենսաբանական ռիսկերի նվազեցմանը, որի արդյունքում Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակազմի փրկարար ծառայությունում ձևավորվել է վտանգների գնահատման ու մոնիթորինգի շարժական կայան, իսկ Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայում՝ կենսաբանական պաշտպանության լաբորատորիա:

52. ՄԱԿ-ի զարգացման ծրագրով իրականացված աշխատանքների արդյունքում Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության ստորաբաժանումները ստացել են ոչ միայն տեխնիկական համալրում, այլև հզորացրել են իրենց կարողությունները: ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի օժանդակությամբ իրականացվել են աղետների ռիսկի նվազեցմանն ուղղված ծրագրեր, որոնց արդյունքում կրթական համակարգում տեղի է ունեցել աղետների ռիսկի նվազեցման հարցերով կարողությունների հզորացում: Այս ձեռքբերումները հնարավոր է եղել արձանագրել այն սերտ համագործակցային դաշտի ու աջակցության առկայությամբ, որն իրականացվել է վերջին տարիներին ՄԱԿ-ի զարգացման ծրագրի, ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի, ՄԱԿ-ի աղետների նվազեցման միջազգային ռազմավարության, Ճգնաժամերի կանխարգելման և վերականգնման բյուրոյի, Գլոբալ ռիսկի նույնականացման ծրագրի, Վորլդ Վիժնի, Հայկական կարմիր խաչի, Օքսֆամի, Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գործակալության և այլ կառույցների կողմից:

53. Համագործակցությունը հնարավորություն է ընձեռել ուսումնասիրելու, հասկանալու, ներդնելու և զարգացնելու աղետների ռիսկի կառավարման մշակույթը մեր երկրում: Վերջին

տարիների ընթացքում աղետների ռիսկի նվազեցման փորձը փոխառելու համար Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարություն են այցելել տարեկան շուրջ երկու տասնյակ երկրների ու միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ:

54. Աղետների ռիսկի նվազեցման ազգային ռազմավարությունների իրականացման ուսումնասիրությունը ցույց է տվել, որ վերջիններիս մշակման համար հիմք է հանդիսացել ՀԳԾ-ն: Դրանց իրականացման վերաբերյալ ազգային, տարածաշրջանային և համաշխարհային հաշվետվություններից տեղեկանում ենք, որ պետությունները և այլ համապատասխան շահագրգիռ կողմերն աղետների ռիսկի նվազեցման ոլորտում առաջընթաց են գրանցել տեղական, ազգային և տարածաշրջանային մակարդակներում:

55. Քաղաքականությունների և ռազմավարությունների մշակման և գիտելիքների ձեռքբերման ու փոխանակման գործում կարևոր տեղ են զբաղեցրել Աղետների ռիսկի նվազեցման միջազգային ռազմավարությունը, խորհրդատվական, համակարգման և համագործակցության ձևավորման միջազգային մեխանիզմները, ինչպիսիք են Աղետների ռիսկի նվազեցման գլոբալ ու տարածաշրջանային պլատֆորմներն, ինչպես նաև միջազգային և տարածաշրջանային համագործակցության այլ համապատասխան ֆորումները:

56. ՀԳԾ-ն կարևորագույն ուղղորդող գործիք է հանդիսացել աղետների ռիսկի նվազեցման գործընթացներում և նպաստել Հազարամյակի զարգացման նպատակների իրագործման առաջընթացին: Սակայն ՀԳԾ-ի իրականացման ընթացքում բացահայտվել են մի շարք խնդիրներ՝ կապված աղետների ռիսկը պայմանավորող գործոնների վերացման և գործողությունների նպատակների ու առաջնահերթությունների ձևակերպման հետ, որն անհրաժեշտ է բոլոր մակարդակներում աղետների դիմակայունության հզորացման և իրականացման պատշաճ միջոցների ապահովման համար:

57. Մեր երկիրն աղետների ռիսկի նվազեցման ուղղությամբ արձանագրել է ձեռքբերումներ, որոնք վերաբերում են քաղաքականության մշակմանը, իրականացմանն ու զարգացմանը, որոշումների կայացման մասնակցային ձևաչափի ներդրմանը, որտեղ ներգրավված են բոլոր հիմնական դերակատարներն՝ ազգայինից մինչև տեղական մակարդակը, ինչպես նաև հասարակական, գիտական և միջազգային կազմակերպությունները, հաշմանդամություն ունեցող անձինք, խոցելի խմբերը և այլն: Այս ձեռքբերումների գլխավոր նախապայմաններից մեկը երկրում քաղաքական կամքի առկայությունն է և երկրի զարգացման ապահովման համար կարևորագույն գործոն է հանդիսանում երկրում աղետների ռիսկի նվազեցման արդյունավետ համակարգի ձևավորումն ու զարգացումը՝ տնտեսության բոլոր ոլորտների և հասարակության առավել լայն շերտերի ներգրավմամբ:

58. Առաջընթաց է արձանագրվել տեղական մակարդակում աղետների ռիսկի նվազեցման և կառավարման հարցերով կրթության և բնակչության իրազեկման, քաղաքային ռիսկի կառավարման ժամանակակից մեթոդաբանությունների միասնական մոդելների ներդրման ուղղությամբ, ինչպես նաև ճգնաժամային կառավարման համակարգի ապակենտրոնացման և

տարբեր դերակատարների ներգրավմանն ուղղված Ազգային պլատֆորմի ստեղծման և կայուն գործունեությունն ապահովելու ուղղությամբ:

59. ՀԳԾ-ի իրականացումը հնարավորություն է տվել բացահայտելու այն հիմնական բացթողումները, որոնք առկա էին երկրի զարգացման գործընթացներում աղետների ռիսկի կառավարման գործոնի անտեսման, համապատասխան գիտելիքի և փորձի պակասի, կարողությունների զարգացման անհրաժեշտության, ինչպես նաև տարբեր դերակատարների ներգրավման ու մասնակցային հիմքերի կայացման առումով: Որպես միջազգային գործընթաց՝ այն դարձավ համագործակցության արդյունավետ մեխանիզմների ստեղծման, լավագույն փորձի փոխանակման հիմնաքար ինչպես պետության ներսում գործող տարբեր դերակատարների, այնպես էլ այլ երկրների և կառույցների միջև՝ դառնալով բոլորի կողմից ընդունված և բոլորի ջանքերը միավորող միասնական «խոսք և փորձ» դիմակայունության մշակույթի ձևավորման գործում:

60. ՀԳԾ-ի իրավահաջորդ է հանդիսանում Աղետների ռիսկի նվազեցման Սենդայի 2015-2030 թվականների գործողությունների ծրագիրը, որն ընդունվել է 2015 թվականի մարտի 18-ին Ճապոնիայի Սենդայ քաղաքում կայացած ՄԱԿ-ի աղետների ռիսկի նվազեցման երրորդ համաշխարհային համաժողովի ժամանակ, որտեղ մասնակից 187 պետությունները մեկ անգամ ևս հաստատել են իրենց պատրաստակամությունն առաջնահերթ կարգով լուծելու աղետների ռիսկի նվազեցման և աղետներին դիմակայելու կարողությունների զարգացման հետ կապված խնդիրները՝ դիտարկելով այն երկրի կայուն զարգացման և աղքատության կրճատման համատեքստում, և անհրաժեշտության դեպքում, ներառելու այդ խնդիրները ռազմավարություններում, գործողությունների ծրագրերում, պլաններում և բյուջետային ծրագրերում:

61. Սենդայի գործողությունների ծրագիրը կարևորում է այն մոտեցումը, որ բոլոր մակարդակներում անհրաժեշտ է ծավալուն աշխատանքներ իրականացնել նվազեցնելու սպառնալիքներն ու խոցելիությունը, որը կնպաստի նոր աղետների առաջացման և աղետների ռիսկի առաջացման հանդեպ պատասխանատվության սահմանմանը: Ուստի հարկավոր է ավելի մեծ ուշադրություն դարձնել աղետների ռիսկի առաջացման արմատական պատճառներին, ինչպիսիք են աղքատությունը, կլիմայի փոփոխությունը, չպլանավորված և արագ ուրբանիզացիան, հողօգտագործման վատ կառավարումը և այնպիսի համակցված գործոններ, ինչպիսիք են՝ ժողովրդագրական փոփոխությունները, համակարգային թույլ կառավարումը, իրականացվող քաղաքականությունը, որտեղ հաշվի չեն առնվում ռիսկերը, աղետների ռիսկի նվազեցման ոլորտում մասնավոր ներդրումների համար կանոնակարգերի և խրախուսման միջոցների բացակայությունը, տեխնոլոգիաների սահմանափակ հասանելիությունը, բնական պաշարների անկանոն օգտագործումը, էկոհամակարգերի դեգրադացիան և այլն: Ավելին, հարկավոր է հզորացնել աղետների ռիսկի նվազեցման արդյունավետ կառավարումը

տարածաշրջանային, ազգային և տեղական մակարդակներում և զարգացնել աղետներին արձագանքման, վերականգնման և վերակառուցման պատրաստվածությունը:

62. Աղետների ռիսկի նվազեցման ռազմավարությունը մշակելիս յուրաքանչյուր երկիր ելնում է զարգացման իր առանձնահատկություններից: Աղետների ռիսկի կառավարման տեսլականը, թեև հիմնականում աղետների ռիսկի նվազեցման գործընթացների հայեցակարգ է հանդիսանում, սակայն այն տարբեր երկրներում կարող է ունենալ տարբեր մոտեցումներ և ակնկալիքներ աղետների ռիսկի նվազեցման առնչությամբ և միտված լինել լուծելու երկրին հատուկ հիմնախնդիրներ: Որոշ երկրների համար այն աղքատության նվազեցման հիմնահարց կարող է հանդիսանալ, մեկ այլ երկրի համար քաղաքական, մյուսների համար՝ կայուն զարգացման խնդիր, իսկ մի շարք երկրներ հնարավորություն ունեն միայն մշակել աղետների նվազեցման համար որոշակի համակարգող մեխանիզմներ և իրականացման համար նույնիսկ ֆինանսական ներդրումներ չունենալ:

63. Միջազգային, ինչպես նաև հայաստանյան փորձն աղետների ռիսկի նվազեցման ոլորտում ենթադրում է առկա, գործող ազգային Աղետների ռիսկի նվազեցման ռազմավարությունների կամ հայեցակարգերի վերանայում՝ հաշվի առնելով Սենդայի գործողությունների ծրագրի սկզբունքներն աղետների ռիսկի կառավարման գործընթացներում, ինչպիսիք են աղետների ռիսկի ընկալումը, կառավարման բոլոր մակարդակներում աղետներին դիմակայելու կարողությունների զարգացումը, աղետների ռիսկին վերաբերող տեղեկատվության տրամադրման մեխանիզմների հստակեցումը, աղետների ռիսկի նվազեցման խթանմանը նպաստող գործողությունների հստակ պլանավորումը կառավարման բոլոր մակարդակներում, աղետներին պատրաստվածության մակարդակի բարձրացումը:

ԳԼՈՒԽ IX. ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՓՈՒԼԵՐԸ ԵՎ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

64. Ռազմավարության իրականացման փուլերը կարելի է դասակարգել ըստ իրականացվող ծրագրերի ժամկետների.

1) կարճաժամկետ ծրագրեր.

2) միջնաժամկետ ծրագրեր.

3) երկարաժամկետ ծրագրեր.

4) գործընթացային ծրագրեր:

65. Կարճաժամկետ ծրագրերի խմբին են դասվում ռազմավարության իրականացման այն գործողությունները, որոնց իրականացման համար նախատեսված է մեկից երկու տարի ժամանակահատված: Այս ծրագրերի համար հստակ մշակված են նախադրյալներ, իրականացման հիմնավորումներ, տեսանելի են այն ռեսուրսները, որոնք կպահանջվեն դրանց իրականացման համար, ինչպես նաև հնարավոր է հստակ նախանշել ակնկալվող արդյունքներն

ու հետագա քայլերը: Այս խմբում հիմնականում ներկայացված են ռազմավարական գործողություններ, որոնք կապահովեն ռազմավարության իրականացման իրավական, կազմակերպական և մեթոդաբանական հենքը: Այս գործողությունները կուղեկցվեն համապատասխան կարողությունների զարգացման գործընթացով, ինչպես նաև կիրականացվեն փորձնական ծրագրեր տարբեր մակարդակներում:

66. Միջնաժամկետ ծրագրերի մեջ ներառված են այն միջոցառումները, որոնք կլրացնեն և կշարունակեն կարճաժամկետ ծրագրերի ընթացքը, ինչպես նաև կապահովեն իրավական և մեթոդաբանական դրույթների իրականացումը գործնական քայլերի միջոցով: Այս ծրագրերի իրականացման ժամկետն է երեքից հինգ տարի:

67. Երկարաժամկետ ծրագրերի իրականացման նախատեսվող ժամանակահատվածն ընդգրկում է հինգ և ավելի տարիներ: Այս խմբում են հիմնականում այն գործողությունները, որոնք հնարավոր կլինի սկսել մեկից երկու տարի անց, երբ ապահովված կլինեն դրանց իրականացման նախադրյալներն ու ֆինանսավորման հնարավորությունները, ինչպես նաև այն միջոցառումները, որոնց իրականացումը կրում է երկարաժամկետ բնույթ:

68. Գործընթացային ծրագրերը հիմնականում կրում են շարունակական բնույթ, ունեն կրկնվող գործառույթներ և ապահովում են ծրագրերի իրականացման գործընթացը: Նման ծրագրերի համար առաջարկվում է կիրառել տարեկան պլանավորման և արդյունքների գնահատման մոտեցում, ամեն տարի վերանայելով ծրագրերի ընթացքը և գործողությունների ցանկը՝ ելնելով նախորդ ժամանակաշրջանի արդյունքներից և նոր հնարավորություններից:

69. Ռազմավարության իրականացումից ակնկալվող արդյունքներն են.

1) արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության համակարգի բոլոր մակարդակներում բնակչության պաշտպանության պլանավորում, համակարգի գործունեության կազմակերպման գործընթացի սահմանում.

2) աղետներից ապահովագրման արդիական համակարգի ներդրում.

3) դպրոցներին սպառնացող աղետների ռիսկի կառավարման կարողությունների հզորացում, դպրոցի անձնակազմի և աշակերտների անվտանգության ապահովման մակարդակի բարձրացում՝ կիրառելով ներառական և երեխայակենտրոն մոտեցում.

4) միջազգային չափանիշներին համապատասխան ոլորտը կարգավորող իրավական ակտերի առկայություն.

5) միջազգային մարդասիրական օգնության ստացման և տրամադրման, միջազգային փրկարարական ուժերի երկիր մուտքի և ելքի գործընթացների հստակեցում, պարզեցում և դյուրինացում, արտակարգ իրավիճակներում միջազգային ուժերին աջակցության տրամադրման գործընթացի ապահովում և ընդունող երկրի աջակցության ցանցի առկայություն.

6) աղետների ժամանակ վնասների և կարիքների արագ գնահատման կարողությունների առկայություն.

7) Հայաստանի Հանրապետության մարզերում և համայնքներում աղետների ռիսկի գնահատման և կառավարման միջազգային չափանիշներին համապատասխան կարողությունների առկայություն, համայնքներին սպառնացող աղետների ռիսկի գնահատման, կառավարման և նվազեցման կարողությունների հզորացում.

8) դիմակայուն համայնքների կարողությունների հզորացում, համայնքներում աղետների ռիսկի կառավարման պլանների առկայություն և իրականացում.

9) աղետների ռիսկի կառավարման հարցերի և դրանց դասավանդման հմտությունների ձևավորում, աղետների ռիսկի կառավարման գիտելիքների ձևավորում ուսուցանվողների մոտ և այդ հարցերով դասավանդման միասնական մեթոդաբանության ձևավորում.

10) աղետների ռիսկի նվազեցման մարզային գործուն թիմերի առկայություն, մարզերին սպառնացող աղետների ռիսկի կառավարում, աղետակայուն մարզերի ձևավորում.

11) արտակարգ իրավիճակներում բնակչության վաղ ազդարարման գործուն համակարգի առկայություն՝ հաշվի առնելով հատուկ կարիքներ ունեցող անձանց առանձնահատկությունները.

12) արդի պահանջներին ու միջազգային գործընթացներին համապատասխան ոլորտին առնչվող ռազմավարական փաստաթղթերի և իրավական ակտերի առկայություն.

13) միջազգային չափանիշներին համապատասխան քաղաքաշինության բնագավառի նորմատիվ փաստաթղթերի առկայություն, հասարակական և հատուկ նշանակության շենքերի սեյսմակայունության բարձրացում.

14) աղետների ռիսկի կառավարման միջոցառումների ներառում պետական նպատակային և համայնքային զարգացման ծրագրերում, պլաններում և բյուջեներում.

15) աղետների ռիսկի կառավարման ոլորտում մասնավոր ներդրումների ներգրավվում, նորարարության և տեխնոլոգիական զարգացման խթանում.

16) հետաղետային արագ վերականգման և հետագա վերակառուցման պլանների առկայություն.

17) Հայաստանի Հանրապետության մարզերում և համայնքներում փրկարարական աշխատանքների համար անհրաժեշտ նյութական բազայի համալրում և արդիականացում՝ ժամանակակից փրկարարական, բժշկական, բժշկասանիտարական գույքով, ուսումնական սարքավորումներով.

18) բոլոր մակարդակներում տեղեկատվության կառավարման կարողությունների հզորացում.

19) պետական և համայնքային բյուջեներում աղետների ռիսկի նվազեցմանն ուղղված միջոցառումների ֆինանսավորման ավելացում:

70. Ռազմավարության իրականացումից սպասվելիք արդյունքները, տնտեսական, կառուցվածքային, իրավական, սոցիալական, առողջապահական, մշակութային, կրթական, բնապահպանական, տեխնոլոգիական, քաղաքական գործիքների կիրառման միջոցով, կլինեն աղետների կանխումն ու կանխարգելումը, աղետների ռիսկի նվազեցումը և կառավարումը,

աղետներին արդյունավետ արձագանքումը, հետաղետային վերականգնման կարողությունների հզորացումը, դիմակայունության մշակույթի ձևավորումը:

ԳԼՈՒԽ X. ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՂԵԿԱՎԱՐՄԱՆ, ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԸ

71. Ռազմավարության գործընթացի ղեկավարման և համակարգման համար ձևավորվում է ռազմավարության ղեկավարման խորհուրդ (այսուհետ՝ խորհուրդ), որը Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարին առընթեր խորհրդակցական մարմին է:

72. Խորհրդի նախագահ է հանդիսանում Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարը, իսկ խորհրդի քարտուղար՝ Սենդայի աղետների ռիսկի նվազեցման գործողությունների ծրագրի ազգային համակարգողը:

73. Խորհրդի անդամներ են Հայաստանի Հանրապետության առողջապահության, աշխատանքի և սոցիալական հարցերի, բնապահպանության, գյուղատնտեսության, տնտեսական զարգացման և ներդրումների, էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների, տարածքային կառավարման և զարգացման, կրթության և գիտության, ֆինանսների նախարարների տեղակալները, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետի տեղակալը և Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության նախագահի տեղակալը:

74. Խորհուրդը, ըստ անհրաժեշտության, գումարում է նիստեր, բայց ոչ պակաս, քան տարեկան մեկ անգամ: Խորհրդի նիստերը վարում է խորհրդի նախագահը: Խորհրդի քարտուղարը կազմակերպում է նիստերի անցկացումը, նիստերի արձանագրությունների կազմումը, խորհրդի անդամներին ապահովում է համապատասխան տեղեկատվական փաստաթղթերով, խորհրդի որոշումներն առաքում է կատարողներին:

75. Խորհրդի աշխատակարգը հաստատում է խորհրդի նախագահը:

76. Ռազմավարության գործընթացի մոնիթորինգի և գնահատման համար «Աղետների ռիսկի նվազեցման ազգային պլատֆորմ» հիմնադրամի ներքո, Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության կողմից ստեղծվում են մոնիթորինգի և գնահատման աշխատանքային խմբեր: Աշխատանքային խմբերն իրենց կողմից կատարված աշխատանքները քննարկում են տարեկան չորս անգամ՝ յուրաքանչյուր եռամսյակի ավարտից հետո, իսկ կիսամյակային և տարեկան արդյունքները հաշվետվության ձևով ներկայացնում են խորհրդի նախագահին:

ԳԼՈՒԽ XI. ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ

ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

77. Աղետների ռիսկի կառավարման գործունեությունը ծախսատար է և հնարավոր չէ իրականացնել հենվելով մեկ ֆինանսական աղբյուրի վրա: Անհրաժեշտ է սահմանել աղետների ռիսկի կառավարման առաջնահերթությունները՝ հստակ չափորոշիչներով և ժամկետներով, համապատասխան միջոցառումներ ներառելով միջնաժամկետ և երկարաժամկետ ծախսային ծրագրերում:

78. Աղետների ռիսկի կառավարման գերակայությունները պետք է սահմանվեն յուրաքանչյուր ոլորտում և ներառվեն զարգացման ծրագրերում՝ համապատասխան ոլորտին հատկացվող բյուջեի միջոցներով իրականացնելու նպատակով:

79. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ նախապես ծախսեր կատարելով, տնտեսական և ֆինանսական տեսանկյունից, աղետի կանխարգելումը և կանխումը յոթից տաս անգամ ավելի արդյունավետ է, քան հետևանքների վերացումը, այդ պատճառով անհրաժեշտ է.

1) հայթայթել ֆինանսավորման նոր աղբյուրներ, բնակչության առողջության և շրջապատի համար վտանգ ներկայացնող կազմակերպություններին օրենսդրական փոփոխությունների արդյունքում պարտավորեցնել ապահովելու իրենց գործունեության ռիսկի գոտում գտնվող բնակչության և տարածքների պաշտպանությունը կամ իրենց եկամուտներից այդ նպատակով հատկացումներ կատարելու համապատասխան համայնքների կամ պետական բյուջեներ.

2) բարերարների և գործարարների հովանավորությամբ համայնքներում ստեղծել հիմնադրամներ (մարդասիրական, աղետներին հակազդման և այլն).

3) ընդլայնել միջազգային ծրագրերը՝ ստանալով պետության գործուն աջակցությունը և խրախուսանքը.

4) նոր շինարարություն ծավալելիս համապատասխան իրավական ակտերով և նորմերով շինարարական աշխատանքների պատվիրատուներին պարտադրել կառուցելու ապաստարաններ, ներդնելու հրդեհաշիջման համակարգեր և փրկարարական աշխատանքներին նպաստող այլ համակարգեր.

5) բնակավայրերի տարաբնակեցման և զարգացման ծրագրերում հաշվի առնել ինչպես բնակավայրի դիրքի ընտրությունը, այնպես էլ արտադրական հզորությունների և առողջապահական հիմնարկների նպատակահարմար բաշխումն՝ արտակարգ իրավիճակների կանխման, կանխարգելման և փրկարարական աշխատանքների արդյունավետ ծավալման և պատերազմի ժամանակ բնակչության պաշտպանության կազմակերպման տեսանկյունից:

80. Աղետների ռիսկի կառավարման համակարգի ֆինանսավորման աղբյուրները կարող են լինել.

1) պետական բյուջեն.

2) տեղական ինքնակառավարման մարմինների բյուջեները.

3) «Աղետների ռիսկի նվազեցման ազգային պլատֆորմ» հիմնադրամի միջոցները.

4) բնակչության առողջության և շրջապատի համար վտանգ ներկայացնող կազմակերպությունների ներդրումները.

5) միջազգային և դոնոր կազմակերպությունների ներդրումները.

6) հնարավոր վարկային միջոցները.

7) օրենքով չարգելված այլ աղբյուրները:

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2017 թ.
ապրիլի 6-ի նիստի N 14
արձանագրային որոշման

ԾՐԱԳԻՐ
ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Գործողությունները	**Ակնկալվող արդյունքը**	**Կատարողը**	**Համակատարողները**	**Կատարման ժամկետը**	**Ֆինանսական ապահովումը**
1	2	3	4	5	6
1. Աղետների ռիսկի կառավարման ոլորտի իրավական և կազմակերպական դաշտի կատարելագործում					
1.1. Իրավական դաշտի կատարելագործում՝ աղետների կանխարգելման և հաղթահարման ուղղությամբ գերատեսչությունների պատասխանատվության ու պարտականությունների հստակեցմամբ					
1.1.1 «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին», «Սեյսմիկ պաշտպանության մասին», «Հրդեհային անվտանգության մասին», «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին», «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքների վերանայում	Աղետների ռիսկի կառավարման արդիականացված իրավական դաշտ, աղետների ռիսկի կառավարման միջոցառումների ներառում համայնքային զարգացման ծրագրերում և բյուջեներում	ՀՀ ԱԻՆ	ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն, ՀՀ ԿԱ առընթեր քաղաքաշինության պետական կոմիտե, միջազգային կազմակերպություններ (համաձայնությամբ)	2018թ. 1-ին եռամսյակ	Ֆինանսավորում չի պահանջվում:
1.1.2 «Ընդունող երկրի աջակցության ուղեցույցի» տեղայնացում	Արտակարգ իրավիճակներում միջազգային ուժերին աջակցության տրամադրման գործընթացի ապահովում և օգնություն ընդունող երկրի աջակցության ցանցի ստեղծում	ՀՀ ԱԻՆ	ՀՀ արտաքին գործերի նախարարություն, ՀՀ առողջապահության նախարարություն, ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն, ՀՀ բնապահպանության	2018թ.	Ֆինանսավորում չի պահանջվում:

			նախարարություն, ՀՀ գյուղատնտեսության նախարարություն, ՀՀ ԿԱ ՀՀ ոստիկանություն, ՀՀ ԿԱ ազգային անվտանգության ծառայություն, ՀՀ ԿԱ քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչություն, ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե, ՀՀ մարզպետարաններ, Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ), ՄԱԿ-ի ՄԳՀԳ (համաձայնությամբ), ԱՌՆԱՊ (համաձայնությամբ)		
1.1.3 Արտակարգ իրավիճակներում միջազգային օգնության և նախնական վերականգնողական աշխատանքների օժանդակման և կարգավորման միջազգային ուղեցույցի տեղայնացում	Միջազգային մարդասիրական օգնության ստացման և տրամադրման, միջազգային փրկարարական ուժերի երկիր մուտքի և ելքի գործընթացների պարզեցում	ՀՀ ԱԻՆ	ՀՀ արտաքին գործերի նախարարություն, ՀՀ առողջապահության նախարարություն, ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն, ՀՀ բնապահպանության նախարարություն, ՀՀ գյուղատնտեսության նախարարություն, ՀՀ ԿԱ ՀՀ ոստիկանություն, ՀՀ ԿԱ ազգային անվտանգության ծառայություն, ՀՀ ԿԱ քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչություն, ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե, ԱՌՆԱՊ (համաձայնությամբ), ՀԿԽԸ (համաձայնությամբ ՄԱԿ-ի ՄԳՀԳ (համաձայնությամբ)	2017-2020թթ.	Ֆինանսավորում չի պահանջվում:
1.1.4 Քաղաքաշինության բնագավառի համապատասխան	Աղետներին դիմակայուն և սեյսմակայուն անվտանգ	ՀՀ ԿԱ առընթեր քաղաքաշինությ	ՀՀ ԱԻՆ, ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների	Շարունակա կան	**միջազգային դոնոր**

նորմատիվ փաստաթղթերի վերանայում և արդիականացում՝ աղետների ռիսկի նվազեցման պահանջների ապահովմամբ	շենքերի ու շինությունների կառուցում, գոյություն ունեցող և նոր կառուցվող շենքերի ու շինությունների աղետներին դիմակայունության ապահովում և պահանջների հստակեցում	ան պետական կոմիտե	նախարարություն, ՀԲ (համաձայնությամբ), **միջազգային կազմակերպություններ (համաձայնությամբ)**	2017-2030թթ.	**կազմակերպություններ**
1.2. Տնտեսության, նորարարության ու տեխնոլոգիաների զարգացման ոլորտներում և ծրագրերում աղետների ռիսկի կառավարման միջոցառումների ներառում					
1.2.1 Աղետների ռիսկի կառավարման ոլորտում մասնավոր ներդրումների ներգրավման հայեցակարգի մշակում	Աղետների ռիսկի կառավարման ոլորտում մասնավոր ներդրումների ներգրավման խթանում	ՀՀ ԱԻՆ	ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն, ՀՀ ֆինանսների նախարարություն, ԱՌՆԱՊ (համաձայնությամբ), միջազգային կազմակերպություններ (համաձայնությամբ)	2017թ. 4-րդ եռամսյակ	Ֆինանսավորում չի պահանջվում:
1.2.2 Աղետների ռիսկի կառավարման ոլորտում նորարարության և տեխնոլոգիական զարգացման խթանման հայեցակարգի մշակում	Տեխնոլոգիական զարգացում և նորարարությունների ներդրում աղետների ռիսկի կառավարման ոլորտում	ՀՀ ԱԻՆ	ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն, ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն, ԱՌՆԱՊ (համաձայնությամբ), միջազգային կազմակերպություններ (համաձայնությամբ)	2018թ. 1-ին եռամսյակ	Ֆինանսավորում չի պահանջվում:
1.2.3 Աղետների վաղ ազդարարման համակարգի ձևավորման հայեցակարգի մշակում	Աղետների վաղ ազդարարման ներդրված և գործուն համակարգ, տնտեսական վնասների և մարդկային կորուստների նվազեցում	ՀՀ ԱԻՆ	ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն, ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն, ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն, ԱՌՆԱՊ (համաձայնությամբ), ՀԲ (համաձայնությամբ), միջազգային կազմակերպություններ (համաձայնությամբ)	2018թ. 2-րդ եռամսյակ	Ֆինանսավորում չի պահանջվում:

2. Հաստատությունների մակարդակով աղետների ռիսկի կառավարման ոլորտի զարգացում					
2.1. Հաստատությունների աղետների ռիսկի կառավարման կարողությունների ձևավորում					
2.1.1 Հանրակրթական ուսումնական հաստատություններին սպառնացող աղետների ռիսկի նվազեցման և արտակարգ իրավիճակներում գործելու պլանի ներդնում	Դպրոցների աղետներին դիմակայունության մակարդակի բարձրացում, աղետների ռիսկի նվազեցման միջոցառումների իրականացում	ՀՀ կրթության և գիտության նախարարություն	ՀՀ ԱԻՆ, ՀՀ ԿԱ առընթեր քաղաքաշինության պետական կոմիտե, ՀՀ մարզպետարաններ, ՏԻՄ-եր (համաձայնությամբ), Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ), ՄԱԿ-ի մանկական հիմնադրամ (համաձայնությամբ), Սեյվ դը չիլդրեն (համաձայնությամբ), Վորլդ Վիժն (համաձայնությամբ), ՀԿԽԸ (համաձայնությամբ), ՕքսԵՋեն հիմնադրամ (համաձայնությամբ), «Ստեփանավանի «Լոռէ» փրկարար ջոկատ» ՀԿ (համաձայնությամբ)	2017-2020թթ.	Ֆինանսավորում չի պահանջվում:
2.1.2 Աղետների պատճառած կորուստների ազգային բազայի և աղետների ռիսկի կառավարման տեղեկատվական բազայի կառավարման համակարգի ստեղծում	Վտանգի, խոցելիության, ռիսկի, աղետների և կորուստների վերաբերյալ մանրամասն տեղեկատվություն և հասանելիություն՝ աղետների ռիսկի կառավարման ոլորտում որոշումներ կայացնելու համար	ՀՀ ԱԻՆ	հանրապետական գործադիր մարմիններ, Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ), գիտահետազոտական կազմակերպություններ (համաձայնությամբ), ՀԲ (համաձայնությամբ), միջազգային կազմակերպություններ (համաձայնությամբ)	2019թ. 4-րդ եռամսյակ	միջազգային դոնոր կազմակերպություններ
2.2. Աղետներին արձագանքման պլանների մշակում և շարունակական կատարելագործում ազգային, մարզային ու համայնքային մակարդակներում					

2.2.1 Շահագրգիռ կառույցների հետ համագործակցությամբ աղետներին արձագանքման պլանների մշտական թարմացում, բժշկական, ուսումնական, հատուկ և կարևոր նշանակության հաստատություններում իրատեսական գործողությունների համաձայնեցված պլանների առկայություն՝ բոլոր մակարդակներով	Հաստատություններում աղետներին արձագանքման կարողությունների հզորացում	ՀՀ ԱԻՆ	ՀՀ առողջապահության նախարարություն, ՀՀ կրթության և գիտության նախարարություն, ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն, ՏԻՄ-եր (համաձայնությամբ), ԱՌՆԱՊ (համաձայնությամբ), «Ստեփանավանի «Լոռէ» փրկարար ջոկատ» ՀԿ (համաձայնությամբ), միջազգային կազմակերպություններ (համաձայնությամբ)	Շարունակական 2017-2030թթ.	Ֆինանսավորում չի պահանջվում:
2.2.2 Մարզերում և համայնքներում փրկարարական աշխատանքների համար անհրաժեշտ նյութատեխնիկական բազաների զարգացում	Փրկարարական աշխատանքների իրականացման և աղետներին արձագանքման կարողությունների հզորացում	ՀՀ ԱԻՆ	ՀՀ առողջապահության նախարարություն, ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն, ՏԻՄ-եր (համաձայնությամբ), ՀԿԽԸ (համաձայնությամբ), միջազգային կազմակերպություններ (համաձայնությամբ)	Շարունակական 2017-2030թթ.	միջազգային դոնոր կազմակերպություններ
3. Մարդկային ռեսուրսների զարգացում					
3.1. Աղետների ռիսկի կառավարման հարցերի ներառում հանրակրթական և մասնագիտական կրթական և վերապատրաստման ծրագրերում					
3.1.1 Աղետների ռիսկի կառավարման հարցերի ներառում ՀՀ պետական և տարածքային կառավարման մարմինների անձնակազմերի վերապատրաստման ծրագրերում	Անձնակազմերի աղետների ռիսկի կառավարման կարողությունների զարգացում	ՀՀ ԱԻՆ	ՀՀ մարզպետարաններ, ՀՀ քաղաքացիական ծառայության խորհուրդ (համաձայնությամբ), ՏԻՄ-եր (համաձայնությամբ)	2018թ.	Ֆինանսավորում չի պահանջվում:
3.1.2 Աղետների ռիսկի կառավարման հարցերի ներառում բարձրագույն ուսումնական հաստատությունների կրթական ծրագրերի համապատասխան դասընթացում	Աղետների ռիսկի կառավարման հարցերի վերաբերյալ ուսանողների կարողությունների զարգացում	ՀՀ կրթության և գիտության նախարարություն	ՀՀ ԱԻՆ, ԲՈՒՀ-եր (համաձայնությամբ), ՄԱԿ-ի մանկական հիմնադրամ (համաձայնությամբ)	2018թ.	Ֆինանսավորում չի պահանջվում:

3.1.3 Աղետների ռիսկի կառավարման հարցերի ներառում նախադպրոցական, հանրակրթական, նախնական և միջին մասնագիտական, բարձրագույն ուսումնական հաստատությունների մանկավարժների և վարչական անձնակազմի վերապատրաստման ծրագրերում	Աղետների ռիսկի կառավարման կարողությունների զարգացմանն ուղղված վերապատրաստման ծրագրերի արդիականացում	ՀՀ կրթության և գիտության նախարարություն	ՀՀ ԱԻՆ, ՄԱԿ-ի մանկական հիմնադրամ (համաձայնությամբ), Սեյվ դը չիլդրեն (համաձայնությամբ), «Ստեփանավանի «Լոռէ» փրկարար ջոկատ» ՀԿ (համաձայնությամբ)	2020թ.	Ֆինանսավորում չի պահանջվում:
3.1.4 Աղետների ռիսկի նվազեցման մարզային թիմերի կարողությունների հզորացում	Համայնքային և մարզային մակարդակներում աղետների ռիսկի նվազեցում և դիմակայունության մակարդակի բարձրացում	ՀՀ ԱԻՆ	ՀՀ մարզպետարաններ, ՏԻՄ-եր (համաձայնությամբ), Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ), ԱՌՆԱՊ (համաձայնությամբ), ՄԱԶԾ (համաձայնությամբ), ՄԱԿ-ի մանկական հիմնադրամ (համաձայնությամբ), ՀԿԽԸ (համաձայնությամբ), Օքսեֆեն հիմնադրամ (համաձայնությամբ), «Ստեփանավանի «Լոռէ» փրկարար ջոկատ» ՀԿ (համաձայնությամբ)	Շարունակական 2017-2030թթ.	միջազգային դոնոր կազմակերպություններ
3.2. Առողջապահական համակարգում աղետների բժշկության գիտելիքներով զինված ու պատրաստված բժշկական անձնակազմերի ձևավորում					
3.2.1 Մասնագիտական զարգացման և վերապատրաստման ծրագրերում աղետների բժշկության գծով պատրաստվածության գործընթացի իրականացման ապահովում	Աղետների բժշկության զարգացում	ՀՀ առողջապահության նախարարություն	ՀՀ ԱԻՆ, ՀՀ պաշտպանության նախարարություն, ՀՀ ԿԱ ՀՀ ոստիկանություն	Շարունակական 2017-2030թթ.	Ֆինանսավորում չի պահանջվում:
4. Գիտական և տեղեկատվական հենքի ամրապնդում					
4.1. Աղետների ռիսկի կառավարմանն ուղղված մեթոդաբանական հենքի զարգացում					
4.1.1 Բազմակլաստերային	Աղետի ժամանակ վնասի,	ՀՀ ԱԻՆ	ՀՀ առողջապահության	2017-2018թթ.	միջազգային

նախնական արագ գնահատման միջազգային մեթոդաբանության տեղայնացում	կորուստների և կարիքների արագ գնահատում		նախարարություն, ՀՀ բնապահպանության նախարարություն, ՀՀ գյուղատնտեսության նախարարություն, ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն, ՀՀ մարզպետարաններ, ՏԻՄ-եր (համաձայնությամբ), ԱՌՆԱՊ (համաձայնությամբ), ՄԱԿ-ի ՄԳՀԳ (համաձայնությամբ), ՀԲ (համաձայնությամբ)		դոնոր կազմակերպություններ
4.1.2 Բազմակլաստերային հետաղետային կարիքների գնահատման միջազգային մեթոդաբանության տեղայնացում	Աղետի գոտու վերականգնման գործընթացի կազմակերպման բարելավում	ՀՀ ԱԻՆ	հանրապետական գործադիր մարմիններ, ՀՀ մարզպետարաններ, ՏԻՄ-եր (համաձայնությամբ), ԱՌՆԱՊ (համաձայնությամբ), ՄԱԿ-ի ՄԳՀԳ (համաձայնությամբ), ՀԲ (համաձայնությամբ)	2017-2018թթ.	միջազգային դոնոր կազմակերպություններ
4.2. Աղետների ռիսկի կառավարման մեթոդաբանության և տեղեկատվական հոսքերի կիրառում					
4.2.1 Տեղական մակարդակում աղետների ռիսկի կառավարման միասնական մեթոդաբանության ներդրում	Համայնքների աղետներին դիմակայման մակարդակի բարձրացում, համայնքներին սպառնացող աղետների ռիսկի, խոցելիության և կարողությունների պարբերական գնահատում	ՀՀ ԱԻՆ	ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն, ՏԻՄ-եր (համաձայնությամբ), ԱՌՆԱՊ (համաձայնությամբ), «Ստեփանավանի «Լոռէ» փրկարար ջոկատ» ՀԿ (համաձայնությամբ), միջազգային կազմակերպություններ (համաձայնությամբ)	2017-2020թթ.	Ֆինանսավորում չի պահանջվում:
4.2.2 Ազգային, մարզային և համայնքային մակարդակներում տեղեկատվության կառավարման կարողությունների հզորացում	Տեղեկատվության կառավարման գործուն համակարգի առկայություն	ՀՀ ԱԻՆ	հանրապետական գործադիր շահագրգիռ մարմիններ, ՏԻՄ-եր (համաձայնությամբ), ՋԼՄ-ներ (համաձայնությամբ), «Ստեփանավանի «Լոռէ» փրկարար ջոկատ» ՀԿ (համաձայնությամբ),	Շարունակական 2017-2030թթ.	Ֆինանսավորում չի պահանջվում:

			միջազգային կազմակերպություններ (համաձայնությամբ)		
4.2.3 Ճգնաժամային հաղորդակցության և հանրային իրազեկման կարողությունների հզորացում	ՀՀ պետական կառավարման մարմինների և ՏԻՄ-երի, լրատվամիջոցների, բնակչության իրազեկման և աղետներին պատրաստված-ության մակարդակի բարձրացում, ազգային և հանրային իրազեկման լրարշավների ու համապետա-կան խաղ-վարժանքների կազմակերպում	ՀՀ ԱԻՆ	հանրապետական գործադիր մարմիններ, ՏԻՄ-եր (համաձայնությամբ), «Արտակարգ ալիք» լրատվական կենտրոն ՀԿ (համաձայնությամբ), ՋԼՄ-ներ (համաձայնությամբ), միջազգային կազմակերպություններ (համաձայնությամբ)	Շարունակա կան 2017-2030թթ.	միջազգային դոնոր կազմակերպությ ուններ
4.2.4 Աղետների ռիսկի կառավարման հանրամատչելի շտեմարանի ստեղծում	Աղետների ռիսկի կառավարման հանրամատչելի շտեմարանի առկայություն	ՀՀ ԱԻՆ	հանրապետական գործադիր մարմիններ, միջազգային կազմակերպություններ (համաձայնությամբ)	2020թ. 4-րդ եռամսյակ	միջազգային դոնոր կազմակերպությ ուններ
4.2.5 Բնապահպանական արտակարգ իրավիճակների և էկոլոգիական վիճակի արագ գնահատման միջազգային մեթոդաբանության տեղայնացում և ներդրում	Բնապահպանական արտակարգ իրավիճակների և էկոլոգիական վիճակի արագ գնահատման մեխանիզմի զարգացում	ՀՀ ԱԻՆ	ՀՀ բնապահպանության նախարարություն, ՏԻՄ-եր (համաձայնությամբ), ԱՌՆԱՊ (համաձայնությամբ), միջազգային կազմակերպություններ (համաձայնությամբ)	2017-2020թթ.	միջազգային դոնոր կազմակերպությ ուններ
5. Աղետների ռիսկի կառավարման ոլորտում ներդրումային ծրագրերի իրականացման հնարավորությունների ընդլայնում					
5.1. Աղետների ռիսկի կառավարման պետական, մասնավոր կարճաժամկետ և երկարաժամկետ ներդրումների ավելացում					
5.1.1 Համայնքներում աղետների ռիսկի նվազեցմանն ուղղված միջոցառումների ֆինանսավորման ավելացում	Համայնքներում աղետների ռիսկի նվազեցման միջոցառումների իրականացում	ՀՀ ԱԻՆ	ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն, ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն, ՀՀ գյուղատնտեսության նախարարություն, ՀՀ ֆինանսների նախարարություն, ՏԻՄ-եր (համաձայնությամբ)	Շարունակա կան 2017-2030թթ.	միջազգային դոնոր կազմակերպությ ուններ

5.1.2 Աղետներից ապահովագրման համակարգի ներդրում	Աղետներից վնասների և կորուստների փոխհատուցում	ՀՀ կենտրոնական բանկ (համաձայնությամբ)	ՀՀ ԱԻՆ, ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն, ՀՀ գյուղատնտեսության նախարարություն, ՀՀ ֆինանսների նախարարություն, ՀԲ (համաձայնությամբ), միջազգային կազմակերպություններ (համաձայնությամբ), ապահովագրական ընկերություններ (համաձայնությամբ)	2020թ.	միջազգային դոնոր կազմակերպություններ
5.2. Առողջապահական, կրթական, սոցիալական և հասարակական նշանակություն օբյեկտների շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում աղետակայուն ժամանակակից քաղաքաշինական նորմերի պահպանման ապահովում					
5.2.1 Հանրակրթական դպրոցների սեյսմիկ անվտանգության բարելավում	Սեյսմիկ աղետներին պատրաստվածության և արձագանքման կարողությունների հզորացում	ՀՀ ԱԻՆ	ՀՀ կրթության և գիտության նախարարություն, ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն, ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտե, Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ)	Շարունակական 2017-2030թթ.	Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ (համաձայնությամբ)
5.2.2 Նախադպրոցական, երեխաների, տարեցների ու հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի և պաշտպանության, առողջապահական հաստատությունների շենքերի սեյսմակայունության բարձրացում	Շենքերի անվտանգության մակարդակի բարձրացում	ՀՀ ԱԻՆ	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, ՀՀ առողջապահության նախարարություն, ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն, ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտե	Շարունակական 2017-2030թթ.	միջազգային դոնոր կազմակերպություններ
6. Աղետների ռիսկի կառավարման կարողությունների զարգացում					
6.1. Աղետների ռիսկի գնահատման իրականացում համայնքներում					
6.1.1 Երևան քաղաքի համար	Տարահանման տարածքների	Երևանի	ՀՀ ԱԻՆ, միջազգային դոնոր	2020թ.	Ֆինանսավորում

աղետների ռիսկի կառավարման տեղեկատվական համակարգի ձևավորում, բնակչության տարահանման համար բազային տարածքների հստակեցում քաղաքամերձ գոտում	հատկացում	քաղաքապետարան (համաձայնությամբ)	կազմակերպություններ (համաձայնությամբ)		չի պահանջվում:
6.1.2 Համայնքներում աղետների ռիսկի էլեկտրոնային քարտեզների ներդրում	Աղետների ռիսկի էլեկտրոնային քարտեզների առկայություն	ՀՀ ԱԻՆ	ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն, ՀՀ հանրապետական գործադիր շահագրգիռ մարմիններ, ՏԻՄ-եր (համաձայնությամբ), միջազգային կազմակերպություններ (համաձայնությամբ)	Շարունակական 2017-2030թթ.	միջազգային դոնոր կազմակերպություններ
6.1.3 Երևան քաղաքի համար երկրատեղեկատվական միասնական համակարգի ստեղծում և գործարկում	Գործող երկրատեղեկատվական միասնական համակարգ	Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ)	ՀՀ ԱԻՆ, ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե, ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտե, միջազգային կազմակերպություններ (համաձայնությամբ)	2020թ.	միջազգային դոնոր կազմակերպություններ
6.2. Համայնքային զարգացման պլաններում և բյուջեներում աղեփների ռիսկի նվազեցման միջոցառումների ներառում					
6.2.1 Համայնքային զարգացման ծրագրերի և բյուջեների ձևավորման գործընթացում աղետների ռիսկի նվազեցման միջոցառումների ներառում	Համայնքի դիմակայունության մակարդակի բարձրացում, աղետների ռիսկի նվազեցում	ՀՀ ԱԻՆ	ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն	Շարունակական 2017-2030թթ.	Ֆինանսավորում չի պահանջվում:
6.2.2 Աղետների ռիսկի կառավարման միջոցառումների ներգրավում Երևանի գլխավոր հատակագծի ճշգրտման գործընթացում	Երևանի տարածքում քաղաքաշինական պլանավորման գործընթացի կառավարման կարողությունների զարգացում	Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ)	ՀՀ ԱԻՆ	2020թ.	միջազգային դոնոր կազմակերպություններ
6.2.3 Համայնքի աղետների ռիսկի կառավարման անձնագրի ներդրում	Համայնքի վերաբերյալ տեղեկատվական մեկ միասնական փաստաթղթի առկայություն՝ աղետների	ՀՀ ԱԻՆ	ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն, ՀՀ մարզպետարաններ, ՏԻՄ-եր (համաձայնությամբ), ԱՌՆԱՊ	2017-2021թթ.	միջազգային դոնոր կազմակերպություններ

	ռիսկի կառավարման բաղադրիչների ներառմամբ		(համաձայնությամբ), ՄԱԶԾ (համաձայնությամբ), ՄԱԿ-ի մանկական հիմնադրամ (համաձայնությամբ), ՀԲ (համաձայնությամբ), «Ստեփանավանի «Լոռէ» փրկարար ջոկատ» ՀԿ (համաձայնությամբ)		
7. Գործողությունների իրականացում և մոնիթորինգ					
7.1. Աղետների ռիսկի կառավարման ոլորտում ծրագրերի իրականացում, մոնիթորինգ և արդյունքների գնահատում					
7.1.1 Աղետների ռիսկի կառավարման համայնքային ծրագրերի մոնիթորինգ և արդյունքների գնահատում	Իրականացվող ծրագրի արդյունավետության գնահատում, նոր խնդիրների վերհանում	ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն	ՀՀ ԱԻՆ, ՏԻՄ-եր (համաձայնությամբ), ԱՌՆԱՊ (համաձայնությամբ)	Շարունակական 2017-2030թթ.	Ֆինանսավորում չի պահանջվում:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ
ՀՀ ԱԻՆ – ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն
ԱՌՆԱՊ - «Աղետների ռիսկի նվազեցման ազգային պլատֆորմ» հիմնադրամ
ՏԻՄ – Տեղական ինքնակառավարման մարմին
ՀԲ - Համաշխարհային բանկ
ՀԿԽԸ – Հայկական Կարմիր խաչի ընկերություն
ՄԱԿ-ի մարդասիրական գործերի համակարգման գրասենյակ - ՄԱԿ-ի ՄԳՀԳ